Հաստատված է
«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
Միակ բաժնետիրոջ
22-ը հունվարի 2026թ. N 22/01/2026-1 որոշմամբ

Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ (ԴԻԼԵՐԱՅԻՆ) ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2026

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ «Էփրիքոթ Կապիտալ» կամ «Բրոքեր») Բրոքերային (դիլերային) և պահառության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները (այսուհետ՝ «Պայմաններ» կամ «սույն պայմաններ») մշակված է Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող օրենսդրության՝ մասնավորապես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան և կարգավորում են Էփրիքոթ Կապիտալի և Հաճախորդի միջև հարաբերությունները՝ կապված հետևյալ ծառայությունների մատուցման հետ (այսուհետ՝ առանձին-առանձին և բոլորը միասին՝ Ծառայություններ).

1.1.1. Արժեթղթերի, ինչպես նաև ածանցյալների շուկայում, բրոքերային ծառայություններ (այսուհետ՝ Բրոքերային ծառայություններ), մասնավորապես՝

1) Հաճախորդի Պատվերների ընդունում Հաճախորդի հաշվին Գործարքներ կատարելու վերաբերյալ և դրանց ի կատարում փոխանցելն այլ անձանց,

2) Հաճախորդի Պատվերների հիման վրա, Հաճախորդի հաշվին, սակայն իր անունից Գործարքների կատարում, այդ թվում՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով իրավունքների իրականացմանն ուղղված պայմանագրերի/համաձայնությունների կնքում,

3) Հաճախորդի Պատվերների հիման վրա արժեթղթերով գործարքների կնքում Հաճախորդի հաշվին և Հաճախորդի անունից. ընդ որում, Էփրիքոթ Կապիտալը գործարքները կնքում է Հաճախորդի անունից այն դեպքերում, երբ Էփրիքոթ Կապիտալի կարծիքով Հաճախորդի անունից գործարքի կնքումը վերջինիս համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ և թույլատրված է Առևտրային հարթակի կանոններով:

1.1.2. Ոչ բավարար ծածկույթով (մարժայով) Պայմանների 1.1 կետում նշված ծառայություններ՝ Էփրիքոթ Կապիտալի կողմից հաստատման դեպքում և կարգով:

1.1.3. Պահառության ծառայություններ և գործառնություններ սույն պայմաններում նշված պայմաններով և կարգով:

1.1.4. Փոխառության տրամադրում Հաճախորդներին՝ Ակտիվներով գործարքների իրականացման համար՝ Պայմանների 6-րդ գլխի պահանջներին համապատասխան:

1.1.5. ՀՀ օրենսդրությամբ և/կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգերով նախատեսված Էփրիքոթ Կապիտալի կողմից մատուցվող/կատարվող այլ ծառայություններ/գործառույթներ:

1.2. Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդին մատուցում է «Կրիպտոակտիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կրիպտոակտիվներով ծառայություններ Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի հիման վրա և Հաճախորդի Հաշվի միջոցով՝ Էփրիքոթ Կապիտալի Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով (այսուհետ՝ Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ) սահմանված պահանջներին համապատասխան:

1.3. Սույն Պայմաններով կարգավորվում են ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդներին մատուցվող Ծառայությունները:
1.4. Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաճախորդի դասակարգումն իրականացվում է Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով սահմանված ձևով և ժամկետներում:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

2.1. Սույն Պայմաններում օգտագործվող հիմնական հասկացություններն են.
1) **«Հաշիվ»**՝ Ծառայությունների մատուցման նպատակով Էփրիքոթ Կապիտալի մոտ Հաճախորդի անունով բացված հաշիվ (ներ), որում արտացոլվում են Հաճախորդի կամ վերջինիս անունով հաշվառված այլ անձանց պատկանող Ակտիվները, Հաճախորդի հաշվում հաշվառվող արժեթղթերի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները, արժեթղթերի գծով ստացված եկամուտները, արժեթղթերի հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետները, վերջնական շահառուները և օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկությունները.
2) **«Գործակալ»**՝ անձ, որի ներգրավմամբ և միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Էփրիքոթ Կապիտալը Ծառայություններ է մատուցում Հաճախորդին, այդ թվում՝ այլ պահառուն, օտարերկրյա պահառուն կամ ռեեստրավարը, որի մոտ Էփրիքոթ Կապիտալն ունի անվանատիրոջ հաշիվ, որում ամփոփ կամ առանձնացված ձևով հաշվառվում են Հաճախորդների Ակտիվները.
3) **«Պայմանագիր»**՝ Ծառայությունների մատուցման համար Հաճախորդի և Էփրիքոթ Կապիտալի միջև կնքված «Բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր», որի անբաժանելի մասն է կազմում սույն պայմանները, Սակագները, Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգը, Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները և Տվյալների կառավարման քաղաքականությունը.
4) **«Ակտիվ»**՝ դրամական միջոցներ (ցանկացած արժույթի) և/կամ արժեթղթեր և/կամ ածանցյալ ֆինանսական գործիքներ.
5) **«Գնման/վաճառքի լիմիտային պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Ակտիվ գնելու/վաճառելու նպատակով Էփրիքոթ Կապիտալին տրվող Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ Պատվերում ֆիքսված գնից ոչ բարձր գնով՝ առքի դեպքում, և ոչ ցածր գնով՝ վաճառքի դեպքում.
6) **«Գնման/վաճառքի ստոպ պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Էփրիքոթ Կապիտալին տրվող Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում (Ակտիվի առք/վաճառք) շուկայում ձևավորված գնով (որպես շուկայական)՝ համապատասխան ԱՀ-ում տվյալ Ակտիվի գինը Պատվերում նշված գնին հասնելու դեպքում, ընդ որում փաստացի կատարման գինը մինչև փաստացի կնքման պահը տեղի ունեցած շուկայական տատանումների արդյունքում կարող է տարբերվել Պատվերում նշված գնից՝ թե՛ հօգուտ Հաճախորդի և թե՛ ի վնաս նրա.
7) **«Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Էփրիքոթ Կապիտալին տրվող Պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի)

լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով, այն է՝ Պատվերը պարունակում է դրա կատարման հնարավորություն բացառապես համապատասխան ԱՀ-ում համապատասխան Ակտիվի գինը Պատվերում նշված արժեքին հասնելու դեպքում և միևնույն ժամանակ պարունակում է՝

- Հաճախորդի կողմից առքի դեպքում՝ գործարքի կատարման առավելագույն գնի սահմանում,
- Հաճախորդի կողմից վաճառքի դեպքում՝ գործարքի կատարման նվազագույն գնի սահմանում.

8) **«Արժեթղթերի արգելադրում»**՝ Գործառնություն, որի արդյունքում արժեթղթերի փոխանցումները կամ օտարումն արգելվում կամ սահմանափակվում են Պայմաններով և/կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամանակահատվածում.

9) **«Կենտրոնական բանկ»**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

10) **«Հաճախորդ»**՝ Էփրիքոթ Կապիտալի հետ Պայմանագիր կնքած անձ.

11) **«Արժեթղթերի չեղյալ ճանաչում (մարում)»**՝ Հաշվում հաշվառվող արժեթղթերի դուրս գրման նպատակով իրականացվող գործառնություն՝ արժեթղթերի թողարկման չեղյալ ճանաչման (որը ճանաչվել է չկայացած) և այլ դեպքերում, այդ թվում՝ արժեթղթերի մարման դեպքում.

12) **«Հաշվի փակում»**՝ Էփրիքոթ Կապիտալի հետգործառնական ծրագրում այնպիսի գրառումների կատարում, որոնք անհնարին են դարձնում այդ հաշվին կատարել ցանկացած Գործառնություն, բացի տեղեկատվություն տրամադրելուց.

13) **«Արժեթղթերի փոխարկում»**՝ Հաշվում հաշվառվող մեկ դասի արժեթղթերը մեկ այլ դասի արժեթղթերով փոխանակելու նպատակով իրականացվող գործառնությունն է՝ թողարկողի կողմից սահմանված փոխարկման կարգով.

14) **«Հաշվում ներառված տեղեկությունների փոփոխում»**՝ Էփրիքոթ Կապիտալի տվյալների բազայում Հաճախորդի ինչպես նաև Հաճախորդի լիազորված ներկայացուցիչների անձնական տվյալների փոփոխությունն է.

15) **«Տվյալների կառավարման քաղաքականություն»**՝ Էփրիքոթ Կապիտալի՝ տվյալների կառավարման քաղաքականությունը, որը հաստատվում է Էփրիքոթ Կապիտալի գործադիր տնօրենի կողմից և հանդիսանում է սույն պայմանների անբաժանելի մասը.

16) **«Դիլերային գործունեություն»**՝ Էփրիքոթ Կապիտալի անունից և Էփրիքոթ Կապիտալի հաշվին Ակտիվներով գործարքների կատարում.

17) **«Ածանցյալ ֆինանսական գործիք»**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործիքներ՝ այդ թվում տարբերության վրա հիմնված ֆինանսական պայմանագիրը (CFD), ինչպես նաև «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքով սահմանված «կրիպտոակտիվ» հասկացությունը բավարարող ածանցյալ ֆինանսական գործիքներ.

18) **«Առաքում վճարման դիմաց» կամ «DVP փոխանցում»**՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում արժեթղթերի և DVP փոխանցման համար անհրաժեշտ՝ Վերջնահաշվարկի ապահովման միջոց հանդիսացող դրամական միջոցների միաժամանակյա փոխանցումը համապատասխան հաշիվներում իրականացվում է փոխանցող և ստացող կողմերի,

համապատասխանաբար, փոխանցման և ստացման հանդիպակաց Հանձնարարականների հիման վրա.

19) **«Գործարքի էական պայմաններ»**՝ արժեթղթերի տեսակը և թողարկողը (կամ վերջինիս տարբերակիչ ծածկագիրը), գործարքի տեսակը (արժեթղթի առք, վաճառք, ածանցյալ ֆինանսական գործարքով Հաճախորդի իրավունքների իրականացման գործարք, բաժանորդագրության պատվեր, ռեպո, հակադարձ ռեպո), Պատվերի կատարման ծավալը (արժեթղթերի քանակը), միավոր արժեթղթի գնման/վաճառքի/կատարման գնային սահմանափակումները (եթե պատվերը Շուկայական չէ).

20) **«Օտարերկրյա պահառու»**՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող անձ.

21) **«Ազատ առաքում՝ համաձայնությամբ» կամ «FOP փոխանցում»**՝ Պահառության մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և փոխանցող և ստացող կողմերի՝ համապատասխանաբար փոխանցման և ստացման հանդիպակաց Հանձնարարականներ.

22) **«Ֆիդուցիար պարտականություն»**՝ Էփրիքոթ Կապիտալի պարտականությունն է գործել ի շահ Հաճախորդի՝ դրսևորելով բարեխղճություն և ողջամտություն.

23) **«Սկզբնական Մարժա»** ՝ Գործարքի ընդհանուր գումարի և Մարժայի արտադրյալի այն չափն է, որն անհրաժեշտ է դիրքը բացելու համար.

24) **«Հանձնարարական»**՝ Հաճախորդի կողմից Էփրիքոթ Կապիտալին ներկայացվող՝ Գործառնությունների կատարման կարգադրություն.

25) **«Թողարկող»**՝ ցանկացած անձ, որի կողմից թողարկված արժեթղթերը հանդիսանում են պահառության օբյեկտ, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը.

26) **«Օրենք»**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք.

27) **«Մարժա»**՝ Ակտիվների կարճ վաճառք կամ Ակտիվների ոչ բավարար ծածկույթով գնում իրականացնելիս Հաճախորդի սեփական միջոցների և գործարքի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, որն ունի տոկոսային արտահայտություն.

28) **«Նվազագույն Մարժա»**՝ Հաճախորդի բոլոր գործարքների գծով բաց դիրքերի և Մարժայի արտադրյալի այն չափն է, որն անհրաժեշտ է բաց դիրքերի պահպանման համար.

29) **«Շուկայական պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Էփրիքոթ Կապիտալին տրվող Պատվեր, որը նախատեսում է գնման և/կամ վաճառքի Պատվերի անհապաղ կատարում այդ պահին շուկայում ձևավորված գնով.

30) **«Հաղորդագրություն»**՝ ցանկացած տեղեկատվության ներկայացում, փոխանակում, ծանուցում՝ այդ թվում Պատվեր հանդիսացող տեղեկատվության ներկայացում, որը տեղի է ունենում Հաճախորդի և Էփրիքոթ Կապիտալի միջև կնքված Պայմանագրի շրջանակում.

31) **«Անվանատեր»**՝ անձ, որի անունով անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում, Կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ պահառուի մոտ (այդ թվում՝ օտարերկրյա պահառուի մոտ)՝ առանց սեփականության

իրավունքի փոխանցման գրանցվում են այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող անվանական արժեթղթերը: Անվանատեր կարող են լինել պահառության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձինք, ինչպես նաև օտարերկրյա այն պահառուները, որոնք իրենց երկրի օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն իրավասու են իրենց անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ ունենալ և վարել.

32) **«Հաշվի բացում»**՝ Էփրիքոթ Կապիտալի հետգործառնական ծրագրում Հաճախորդի մասին սկզբնական տեղեկությունների մուտքագրում, ինչն հնարավորություն է տալիս Հաճախորդին մատուցել բրոքերային և պահառության Ծառայություններ, ինչպես նաև Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով սահմանված ծառայություններ:

33) **«Գործառնություն»**՝ Հաճախորդի Հանձնարարականի, Գործակալից ստացված տեղեկատվության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց գրության հիման վրա իրականացվող պահառության գործառնություն՝ համաձայն Կենտրոնական բնակի խորհրդի 06.02.2007թ.-ի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ի (Կանոնակարգ 33) և կիրառելի այլ նորմատիվ իրավական ակտերի

34) **«Բացել հաշիվը մոդուլ»**՝ Էփրիքոթ Կապիտալի վեբկայքի (www.apricotcapital.am) «Բացել հաշիվը» մոդուլ, որի միջոցով իրականացվում են Հաճախորդի և Էփրիքոթ Կապիտալի միջև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի և/կամ Կանոնակարգին համապատասխան Հաշիվների բացումը.

35) **«Պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Էփրիքոթ Կապիտալին ներկայացվող և Հաճախորդի Ակտիվների հաշվին Էփրիքոթ Կապիտալի կողմից կատարման կամ Էփրիքոթ Կապիտալի կողմից երրորդ անձանց ի կատարումն հաղորդման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, էլեկտրոնային կամ ձայնային Հաղորդագրություն, որի նպատակն Հաճախորդի կողմից Ակտիվի օտարումը կամ ձեռքբերումն է կամ ածանցյալ Ֆինանսական գործիքներով պայմանագրի (համաձայնության) կնքումը.

36) **«Արժեթղթերի գծով եկամուտների վճարում»**՝ Գործառնություն, որն իրականացվում է որևէ տեսակի արժեթղթերի դիմաց տվյալ արժեթղթերի թողարկողի կողմից վճարվող եկամուտը թողարկողից ստանալով և տվյալ տեսակի արժեթղթերի սեփականատեր Հաճախորդներին վճարելով.

37) **«Դիրք կամ բաց դիրք»**՝ յուրաքանչյուր Ակտիվի գծով Հաճախորդի պահանջների ու պարտավորությունների հաշվեկշիռ՝ արտահայտված արժույթով կամ արժեթղթերով, որը հավասար չէ զրոյի.

38) **«Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգ»**՝ Էփրիքոթ Կապիտալի՝ Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգը, որը հանդիսանում է սույն պայմանների անբաժանելի մասը.

39) **«Ռիսկերի հայտարարագիր»**՝ Էփրիքոթ Կապիտալի՝ Ներդրումային ծառայությունների հետ կապված հնարավոր ռիսկերի հայտարարագիրը.

40) **«Վերջնահաշվարկ»**՝ Պատվերի հիման վրա կատարված գործարքի արդյունքում Հաճախորդի պարտավորությունների կատարումը և գործարքի մյուս կողմից կատարման ընդունումը, որը սահմանված է տվյալ գործարքի պայմաններով.

41) **«Արժեթղթեր»՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև այլ օրենքներով սահմանված արժեթղթերը, այդ թվում՝ «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքով սահմանված «կրիպտոակտիվ» հասկացությանը համապատասխանող արժեթղթերը.

42) **«Արժեթղթերի պահպանում»՝** Էփրիքոթ Կապիտալի՝ Գործակալների մոտ բացված անվանատիրոջ հաշվում առկա Հաճախորդի արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառում՝ Հաշիվներում համապատասխան գրառումներ կատարելու միջոցով.

43) **«Ազատ առաքում»՝** արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցում, որի դեպքում չի պահանջվում ստացող կողմի հաստատումը կամ համաձայնությունը.

44) **«Կարճ վաճառք»՝** Ակտիվների վաճառք՝ առանց դրանք տիրապետելու.

45) **«Համակարգ»՝** Համապատասխան ինտերֆեյսով էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող հեռախոսային հավելված կամ «Իմ հաշիվը» մոդուլ (հղումը տրված է www.apricotcapital.am կայքում) որին հասանելիություն ունենալով Հաճախորդները կարող են փոխանցել գործարքների կնքման Պատվերներն ի կատարումն, Հաճախորդին ներկայացնել Պատվերների, կատարված գործարքների վերաբերյալ և այլ տեղեկություններ, իրականացնել Հաճախորդի և Էփրիքոթ Կապիտալի միջև հաղորդակցումն ու հաղորդագրությունների/տեղեկատվության փոխանակումը.

46) **«Արժեթղթերի բաժանում (համախմբում)»՝** Գործառնություն, որն իրականացվում է որևէ դասի արժեթղթերի՝ տվյալ դասի ավելի մեծ (փոքր) քանակի արժեթղթերի փոխարկման նպատակով՝ համապատասխան գործակցով փոքրացնելով (մեծացնելով) մեկ արժեթղթի անվանական արժեքը.

47) **«ԱՀ (Առևտրային հարթակ)»՝** ցանկացած կարգավորվող շուկա, ինչպես նաև Ակտիվների առևտրի կազմակերպման համար նախատեսված կազմակերպություն, համակարգ կամ այլ միջոց, որը որոշակի կանոնների համաձայն, ապահովում է Ակտիվների առուվաճառք և դրա արդյունքում վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ.

48) **«Առևտրային նստաշրջան»՝** ժամանակահատված, որի ընթացքում ԱՀ կանոնների համաձայն տվյալ ԱՀ-ում տեղի է ունենում արժեթղթերի/Ածանցյալ ֆինանսական գործիքների առևտուր.

49) **«Գործարք»՝** Ակտիվի օտարման և/կամ ձեռքբերման գործարք, որը կատարվում է Հաճախորդի կողմից Էփրիքոթ Կապիտալին ներկայացված Պատվերի հիման վրա կամ հանդիսանում է Պայմաններով նախատեսված դեպքերում Հաշվում բացված դիրքերի հարկադիր փակման դեպք.

50) **«Ոչ բավարար ծածկույթով (Մարժայով) գործարք»՝** այն Գործարքը, որի Պատվերը ներկայացնելու պահին Հաճախորդի հաշվին առկա չեն դրանով նրա պարտավորություններն ամբողջությամբ կատարելու համար անհրաժեշտ Ակտիվներ և այդ Ակտիվները փոխառությամբ տրամադրվում են Հաճախորդին՝ հնարավոր դարձնելով համապատասխան գործարքի կնքում.

51) **«Սակագներ»**՝ Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Էփրիքոթ Կապիտալի կողմից մատուցվող բրոքերային, ակտիվների կառավարման, պահառուական և հարակից այլ ծառայությունների սակագներ և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված հատուկ սակագներ՝ առկայության դեպքում.

52) **«Արժեթղթերի գրավով կամ այլ ծանրաբեռնվածության գրանցում»**՝ Արժեթղթերի գրավի և երրորդ անձանց այլ իրավունքների գրանցումը և գրանցման դադարեցումը, Էփրիքոթ Կապիտալի տվյալների բազայում արժեթղթերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների մուտքագրումն է.

53) **«Արժեթղթերի փոխանցում»**՝ համապատասխան Հանձնարարականի հիման վրա արժեթղթերի փոխանցումն է ինչպես Էփրիքոթ Կապիտալի մոտ վարվող Հաշվին, այնպես էլ այլ պահառուի կողմից վարվող պահառության/ արժեթղթերի հաշվին.

54) **«Արժեթղթերի արգելադրման դադարեցում»**՝ Արժեթղթերը արգելադրումից հանելու վերաբերյալ գրառումների կատարումն է:

2.2. Պայմաններում օգտագործվող և Պայմանների 2.1 կետում չնշված հասկացություններն ունեն օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերում, իսկ սահմանված չլինելու դեպքում՝ միջազգային գործարար սովորույթների համաձայն այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

2.3. Եթե ակնհայտորեն այլ բան չի բխում սույն Պայմանների որևէ դրույթի կոնկրետ համատեքստից՝ դրանց դրույթների մեկնաբանության սկզբունքներն հետևյալն են՝

2.3.1. ցանկացած փաստաթղթի (ներառյալ, առանց սահմանափակման՝ Պայմանագիր, Պայմաններ, Սակագներ, Տվյալների կառավարման քաղաքականություն) վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակի, ներառյալ բոլոր փոփոխությունների ու լրացումների, մեջբերում, վկայակոչում կամ դրան հղում, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշմամբ այլ բան նախատեսված չէ.

2.3.2. առանձին կետերին բոլոր հղումները վերաբերում են Պայմանների կետերին, եթե հատուկ նշմամբ այլ բան նախատեսված չէ.

2.3.3. Պայմանների գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության մեկնաբանման վրա.

2.3.4. եզակի թվով սահմանված հասկացություններն արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը, եթե այլ բան չի բխում հասկացության կոնկրետ կիրառման դեպքից.

2.3.5. ցանկացած անձի վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ վերջինիս փոխարինող անձին, նրա ներկայացուցչին և/կամ իրավահաջորդին.

2.3.6. «սույն պայմանագիր» և «Պայմանագիր» բառի (հասկացության) օգտագործումը վերաբերում է Պայմանագրին, ներառյալ՝ Պայմաններին, Սակագներին, Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգին, Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններին և Տվյալների կառավարման քաղաքականությանը.

2.3.7. Պայմաններում օգտագործվող «սույնով», «սույնում», «սույնի համաձայն», արտահայտությունները և նման նշանակություն ունեցող այլ բառերը վերաբերում են տվյալ դրույթը պարունակող կետին:
2.3.8. Պայմաններում օգտագործվող «ներառյալ», «այդ թվում՝» բառերն օգտագործելիս ենթադրվում է, որ դրանց հաջորդում են «, բայց չսահմանափակելով» բառերը:

ԳԼՈՒԽ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդին Ծառայություններ մատուցում է Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի հիման վրա և ՀՀ օրենսդրությամբ, սույն պայմաններով սահմանված կարգով:
3.2. Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդներին Ծառայություններ մատուցելիս առաջացող շահերի բախման դեպքերում առաջնորդվում է Էփրիքոթ Կապիտալի՝ Շահերի բախման բացառման և կանխարգելման կանոնակարգի պահանջներով:
3.3. Պայմանագրի, Պայմանների և Ծառայությունների մատուցման շրջանակներում Էփրիքոթ Կապիտալի և Հաճախորդի միջև ցանկացած գործառնությունների և հանձնարարականների, ինչպես նաև ցանկացած տեղեկատվության /ներառյալ՝ հաղորդագրության, փաստաթղթերի, ծանուցումների, քաղվածքների, հաշվետվությունների/ ներկայացում, փոխանցում, փոխանակում, այդ թվում ցանկացած հաղորդակցում կապված Պայմանագրից/Պայմաններից բխող ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ (բոլորը միասին այսուհետ նաև՝ ծանուցում), կատարվում է համաձայն Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգի:
3.4. Համակարգից օգտվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է պահպանել սույն Պայմանների անբաժանելի մաս հանդիսացող Համակարգի անվտանգ օգտագործման կանոնները, որը հաստատվում է Էփրիքոթ Կապիտալի գործադիր տնօրենի կողմից և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Էփրիքոթ Կապիտալի պաշտոնական կայքում:
3.5. Իմ հաշիվը մոդուլի միջոցով Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ երկքայլանի նույնականացման/ստուգման ապահովմամբ, այդ թվում՝ մուտքանվան ու գաղտնաբառի համապատասխանությամբ, Հաճախորդի կողմից հաստատելու և/կամ Հաճախորդի էլեկտրոնային փոստի միջոցով Հաճախորդի կողմից տրված ցանկացած և բոլոր հաստատումները, համաձայնությունները, ծանուցումները, Հանձնարարականները և Պատվերները համարվում են Հաճախորդի կողմից պատշաճ ներկայացված ու նույնականացված, իսկ նման կարգով ստացված հաստատումները, համաձայնությունները, ծանուցումները, Հանձնարարականները և Պատվերները, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթղթերը /ներառյալ՝ Պայմանագիրը/ ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ դրանց՝ Հաճախորդի կողմից ձեռագիր ներկայացվելու դեպքում:
3.6. Էփրիքոթ Կապիտալը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է Հաճախորդի հարկային Գործակալի գործառույթներ: Հաճախորդը սույնով հաստատում է, որ պատշաճ տեղեկացված է և համաձայն է, որ այն դեպքերում, երբ Էփրիքոթ Կապիտալը չի հանդիսանում Հաճախորդի հարկային գործակալ, Հաճախորդն

ինքն է կրում իր հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը: Ընդ որում, ՀՀ տարածքում թողարկված պարտատոմսերից ստացված արժեկտրոնային եկամուտներից գոյացած հարկային պարտավորությունների հարկային գործակալ է հանդիսանում թողարկողը (իսկ Էփրիքոթ Կապիտալի կողմից թողարկված լինելու դեպքում՝ Էփրիքոթ Կապիտալը)՝ ՀՀ օրենսդրության կարգավորումներին համապատասխան: Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում ցանկացած և բոլոր դեպքերում, երբ Հաճախորդին ՀՀ տարածքից դուրս թողարկված (արտասահմանյան) արժեթղթերից եկամուտները համապատասխան արժեթղթերի թողարկողների կողմից վճարվել են կամ վճարվելու են նման եկամուտների մասով կատարված/կատարման ենթակա հարկային վճարների նվազեցմամբ:

3.7. Պայմանագրի կնքումը, Հաշվի բացումը և Հաճախորդի հետագա սպասարկումն իրականացվում են Էփրիքոթ Կապիտալի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգին համապատասխան:

3.8. Պայմանագրի կնքումը և Էփրիքոթ Կապիտալի մոտ Հաշվի բացումը Հաճախորդին չի պարտավորեցնում անմիջապես արժեթղթեր մուտքագրել այդ հաշվին:

3.9. Պահպանելով Հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները՝ Էփրիքոթ Կապիտալը սույն պայմանների համաձայն Ծառայություններ մատուցելիս առանց Հաճախորդի համաձայնության կարող է օգտվել երրորդ անձանց ծառայություններից: Հաճախորդի Պատվերները կատարելու համար Էփրիքոթ Կապիտալն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից և ԱՀ-ներից, եթե Հաճախորդի Պատվերում չի նշված այն կոնկրետ միջնորդը, որի հետ Էփրիքոթ Կապիտալը պայմանագրային հարաբերություններ է հաստատել:

3.10. Հաճախորդն ընդունում և համաձայնվում է, որ այն դեպքում, երբ իր Հաշվին որևէ արժույթով առկա է բացասական մնացորդ Էփրիքոթ Կապիտալը լիազորված է, առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու, համապատասխան բացասական մնացորդը ծածկել Հաճախորդի՝ այլ արժույթի դրական մանացորդի հաշվին: Այս դեպքում արտարժույթային փոխարկումն իրականացվում է Էփրիքոթ Կապիտալի կողմից՝ տվյալ պահին գործող շուկայական փոխարժեքով՝ Հաճախորդի համար հնարավորինս նպաստավոր պայմաններով: Էփրիքոթ Կապիտալը պարտավոր չէ ստանալ Հաճախորդի նախնական համաձայնությունը նման փոխարկման կամ փոխանցման համար և պատասխանատվություն չի կրում այդ գործողությունների արդյունքում Հաճախորդի հնարավոր կորուստների համար:

Սույն կետի կարգավորումը չի տարածվում այն արժույթի նկատմամբ, որի մասով Էփրիքոթ Կապիտալը տվյալ Հաճախորդին Պայմանագրով տրամադրել է Ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելու հնարավորություն:

3.11. Էփրիքոթ Կապիտալը հանդիսանում է անձնական տվյալներ մշակող՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի: Սույնով Հաճախորդը

տալիս է իր համաձայնությունը Էփրիքոթ Կապիտալի կողմից իր անձնական տվյալները Տվյալների կառավարման քաղաքականության համաձայն մշակելու վերաբերյալ:
3.12. Ծառայությունների մատուցման հետ կապված Հաճախորդի ցանկացած դիմում, բողոք քննարկվում է Էփրիքոթ Կապիտալի՝ Հաճախորդների բողոքների քննության ընթացակարգով սահմանված կարգով:
3.13. Հաճախորդը հասկանում և համաձայնվում է, որ սույն Պայմանների շրջանակներում մատուցվող ծառայությունները չեն ներառում ներդրումային խորհրդատվության տրամադրում, ուստի Ծառայությունների մատուցման ընթացքում Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաճախորդին հայտնած որևէ տեղեկություն չի կարող դիտվել որպես երաշխիք Պատվերի կամ Հանձնարարականի հաջող իրականացման համար և Հաճախորդը ամբողջությամբ կրում է նման տեղեկության հիման վրա Պատվերի կամ Հանձնարարականի ներկայացման դեպքում դրա չկատարման կամ ոչ պատշաճ ձևով կատարման ռիսկը:

ԳԼՈՒԽ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

4.1. Էփրիքոթ Կապիտալի գործադիր տնօրենն իր որոշմամբ սահմանում է Պայմանագրի օրինակելի ձև:
4.2. Հաճախորդի կողմից Պայմանագրի կնքումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝
ա) առերես՝ Էփրիքոթ Կապիտալի գրասենյակում կամ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ այլ վայրում,
բ) առանց առերես շփման՝ տեսազանգի միջոցով,
գ) Բացել հաշիվ մոդուլի միջոցով:
Սույն կետում նշված եղանակներով Պայմանագրի կնքման պայմանները և կարգը սահմանվում է Էփրիքոթ Կապիտալի ներքին իրավական ակտերով:
4.3. Պայմանագիրը համարվում է կնքված Հաճախորդի և Էփրիքոթ Կապիտալի կողմից երկկողմանի ստորագրման պահից:
4.4. Պայմանագրի կնքմամբ Հաճախորդի համար բացվում է Հաշիվ: Հաշվի բացման վերաբերյալ տեղեկացումը Հաճախորդին է ներկայացվում Պայմանագրի կնքման ժամանակ Հաճախորդի կողմից նշված տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով:
4.5. Հաճախորդի համար Հաշվի բացումը, վարումը, փակումը, ինչպես նաև Հաշվով գործառնությունների իրականացումը կատարվում է հետգործառնական ծրագրի համապատասխան դաշտերում տեղեկությունները մուտքագրելու միջոցով:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Գործարք կնքելու համար Հաճախորդը Էփրիքոթ Կապիտալին է ներկայացնում Պատվեր, որը պետք է պարունակի Գործարքի էական պայմանները: Պատվերում

նշվում է նաև Պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային, ստոպ լիմիտային և այլն), ինչպես նաև Պատվերի վավերության (կատարման ենթակա լինելու) ժամկետները՝ արտահայտված օրերով կամ մինչև հետկանչում: Պատվերի տեսակը նշված չլինելու դեպքում այն համարվում է Շուկայական պատվեր: Պատվերի վավերության ժամկետ նշված չլինելու դեպքում այն վավեր է մինչև տվյալ ԱՀ-ում գործարքի կատարման Պատվերը ներկայացնելիս կամ դրանից հետո սկսված առաջին Առևտրային նստաշրջանի ավարտը:

5.2. Հաճախորդի Ակտիվներով Գործարքների կնքման համար հիմք են հանդիսանում սույն Պայմանների Հավելված 1-ով սահմանված Պատվերի ձևին համապատասխան կամ Գործարքի էական պայմանները պարունակող՝ թղթային կամ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստով, այլ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով կամ հեռախոսազանգով Էփրիքոթ Կապիտալին հաղորդված կամ Համակարգով ներկայացված Պատվերները: Ընդ որում՝ Հաճախորդը կարող է փոխել Պատվերներ ներկայացնելու համար Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեն կամ ավելացնել նոր հասցե՝ թղթային կամ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից նախապես Էփրիքոթ Կապիտալին նոր հասցեն պարունակող ծանուցում ուղարկելու պայմանով: Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի վստահելու, որ Հաճախորդի անունից սույն կետում նշված միջոցներով ներկայացված Պատվերները, Հանձնարարականները, ցուցումները կամ այլ գործողությունները կատարված են կիրառելի օրենսդրության համաձայն Հաճախորդի կողմից պատշաճ լիազորված անձի կողմից՝ նույնիսկ, եթե փաստացի դրանք կատարել է այլ անձ:

Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ սույն կետում թվարկված ոչ բոլոր միջոցները կարող են միաժամանակ հասանելի լինել Հաճախորդին Պատվերի ներկայացման համար:

5.3. Հաճախորդի կողմից Պատվերը Համակարգի կամ այլ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ներկայացնելու դեպքում Հաճախորդը կարող է հավաստիանալ Էփրիքոթ Կապիտալի կողմից Պատվերը ստանալու փաստի վերաբերյալ հեռախոսազանգի և Էփրիքոթ Կապիտալի լիազոր աշխատակցի հետ հեռախոսազրույցի միջոցով, որի ընթացքում լիազոր ներկայացուցիչը հաստատում է կամ հերքում նույն զրույցի ընթացքում Հաճախորդի կողմից նկարագրված էական պայմաններով գործարք կնքելու էլեկտրոնային Պատվերի ընդունման փաստը: Նշված փաստը Հաճախորդի համար կարող է հավաստել նաև էլեկտրոնային փոստի համապատասխան օպերատորը՝ Հաճախորդի կողմից ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ստացումը համապատասխանող հետադարձ ծանուցման ռեժիմ ընտրելու դեպքում, որի հավաստիության համար սակայն Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում:

5.4. Հեռախոսազանգով փոխանցվող Պատվերները ձայնագրվում են Էփրիքոթ Կապիտալի կողմից և սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Էփրիքոթ Կապիտալի հետ իր հաղորդակցությունների փոխանակման ձայնագրությանը: Հեռախոսազանգով Պատվեր ընդունելիս Էփրիքոթ Կապիտալի լիազորված աշխատակիցը իրավունք ունի իր հետ կապ հաստատած անձի ինքնությունը ճշտելու նպատակով տվյալ անձին ուղղել դրա համար անհրաժեշտ հարցեր, այդ թվում՝ հարցնել

Հաճախորդի համար բացված հաշվի համարը, Պայմանագրի վավերապայմանները և Հաճախորդի նույնականացման համար անհրաժեշտ այլ հարցեր, և Պատվերն ընդունել միայն այն դեպքում, երբ ստացված պատասխանների հիման վրա Հաճախորդը նույնականացվում է:

5.5. Հեռախոսազանգով փոխանցված Պատվերը ներկայացնելիս Հաճախորդը արտասանում է Պայմանների 5.1 կետում նշված պայմանները, որից հետո Էփրիքոթ Կապիտալի լիազորված անձը կրկնում է դրանք, իսկ Հաճախորդը «հաստատում եմ» բառի արտասանմամբ հաստատում է Էփրիքոթ Կապիտալի լիազոր ներկայացուցչի կողմից Պատվերի պայմանները ճշգրիտ ընկալելու փաստը:

5.6. Հաճախորդի կողմից Պատվերը թղթային ձևով Էփրիքոթ Կապիտալին ներկայացվում է առնվազն մեկ օրինակից առձեռն՝ ստորագված և կնքված (կնիքի առկայության դեպքում) Հաճախորդի և/կամ նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի կողմից, ընդ որում մեկ օրինակը մնում է Էփրիքոթ Կապիտալի մոտ: Հաճախորդն իր հայեցողությամբ կարող է ներկայացնել նաև Պատվերի երկրորդ օրինակը՝ խնդրելով, որ «Պատվերն ընդունված է» նշագրմամբ վերադարձվի իրեն:

5.7. Էփրիքոթ Կապիտալը կարող է ձեռնարկել հետևյալ քայլերը Հաճախորդին/նրա անունից հանդես եկող անձին նույնականացնելու և/կամ նրանց լիազորությունները ստուգելու նպատակով՝

1) հեռախոսազանգով ներկայացված Պատվերի դեպքում՝ Հաճախորդի ինքնության ստուգում և նույնականացում՝ Պայմանների 5.5 կետով սահմանված կարգով,

2) թղթային եղանակով ներկայացված Պատվերի դեպքում՝ Պատվերի վրա զետեղված ստորագրության և կնիքի համապատասխանություն /բավարար չափով նմանություն/ Հաճախորդի և/կամ նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի ստորագրության և կնիքի հետ (առկայության դեպքում),

3) էլեկտրոնային փոստով ներկայացված Պատվերի դեպքում՝ Պատվերի ուղարկման էլեկտրոնային փոստի հասցեի համապատասխանություն Պայմանագրին և սույն Պայմաններին համապատասխան Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեի հետ,

4) Իմ հաշիվը մոդուլի միջոցով ներկայացված Պատվերի դեպքում՝ Իմ հաշիվը համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ երկքայլանի նույնականացման/ստուգման ապահովում, այդ թվում՝ մուտքանվան ու գաղտնաբառի համապատասխանություն,

5) Հեռախոսային հավելվածի միջոցով ներկայացված Պատվերի դեպքում՝ մուտքանունի և գաղտնաբառի կիրառում կամ կենսաչափական տվյալների մշակում,

6) էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով ներկայացված Պատվերի դեպքում՝ Հաճախորդի ինքնության ստուգում և նույնականացում՝ Պայմանների 5.5 կետով սահմանված կարգով:

5.8. Հաճախորդը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, այդ թվում նաև փոփոխել Էփրիքոթ Կապիտալի աշխատակցի կողմից տրամադրված գաղտնաբառը, և իրականացնել պատշաճ վերահսկողություն, որպեսզի բացառի Հաճախորդի իրավասու էլեկտրոնային հասցեներին կամ այլ կապի միջոցներին

/հաղորդակցման եղանակներին/ և/կամ Համակարգին համապատասխան իրավասություն չունեցող անձանց /ոչ իրավասու անձանց/ կողմից մուտքը և/կամ նրանց հասանելիությունը: Համապատասխանաբար, Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում այն բոլոր դեպքերի համար, երբ Հաճախորդի և/կամ նրա Պատվերների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դարձել նման իրավասություն չունեցող անձանց և/կամ Պատվերը կամ այլ հաղորդագրությունը տրամադրվել է Հաճախորդի անունից, սակայն նման լիազորություն չունեցող անձանց կողմից ու կատարվել է Էփրիքոթ Կապիտալի կողմից, պայմանով, որ Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդի/Հաճախորդի անունից հանդես եկող անձի ինքնության ստուգման և նույնականացման, ինչպես նաև իրավասությունների ստուգման նպատակով ձեռնարկել է Պայմանների 5.7 կետով նախատեսված ողջամիտ քայլերը: Բոլոր դեպքերում Հաճախորդի կապի միջոցների /հաղորդակցման եղանակների/ և/կամ Համակարգի չարտոնագրված մուտքի կամ ապօրինի հասանելիության հետևանքով առաջացած բոլոր իրավական ռիսկերն ու հետևանքները (ներառյալ՝ իրավասության կամ լիազորության սահմանազանցման ռիսկը) կրում է Հաճախորդը:

5.9. Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդի Պատվերները կատարում է կամ հաղորդում է երրորդ անձանց ի կատարումն այն դեպքերում, երբ Հաճախորդի Հաշվում առկա են այդ Պատվերներում նշված գործարքի վերջնահաշվարկի կատարման և Էփրիքոթ Կապիտալի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների մարման համար բավարար Ակտիվներ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում է կամ ի կատարումն է հաղորդվում/փոխանցվում Մարժայով գործարքի կնքման Պատվեր: Հաճախորդի հետ նախապես համաձայնեցված դեպքերում և պայմաններով Էփրիքոթ Կապիտալը կարող է Պատվերները կատարել կամ հաղորդել երրորդ անձանց ի կատարումն այն դեպքերում, երբ Հաճախորդի Հաշվում առկա չեն բավարար Ակտիվներ: Այս դեպքում Հաճախորդը պարտավորվում է վերջինիս Հաշվում ապահովել բավարար միջոցներ Էփրիքոթ Կապիտալի հետ համաձայնեցված ժամկետում, իսկ նման համաձայնություն առկա չլինելու դեպքում՝ Պատվերի կատարման պահից 24 ժամվա ընթացքում:

5.10. Պատվերի ընդունումը, ընդունված Պատվերի կատարումը և/կամ ի կատարում հաղորդումը մերժվում է հետևյալ դեպքերից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում.

ա) այն չի ներկայացվել Պայմաններով սահմանված կարգով, ձևով և բովանդակությամբ, սխալ են լրացված Պատվերի կատարման համար անհրաժեշտ տվյալները,

բ) Էփրիքոթ Կապիտալի մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել Պատվերը ներկայացնող անձի՝ այն ներկայացնելու իրավասություն ունենալու վերաբերյալ՝ տվյալ անձի ինքնությունը պարզելու համար Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված գործողությունները կատարելու արդյունքում,

գ) Գործակալները մերժում են համապատասխան Հաճախորդի կողմից ներկայացված և Էփրիքոթ Կապիտալի կողմից իրենց հաղորդված Պատվերի ընդունումն ի կատարումն և/կամ կատարումը՝ հաշվի առնելով նրանց կողմից որոշակի շուկաներում և ԱՀ-ներում գործարքների կնքում/կատարումը ապահովելու հնարավորության բացակայությունը,

դ) Էփրիքոթ Կապիտալի համար իրենից անկախ ցանկացած պատճառով օբյեկտիվորեն անհնարին է դարձել Պատվերի կատարումը կամ դրա հաղորդումն ի կատարումն,
ե) համապատասխան ԱՀ-ի կամ Գործակալների կողմից սահմանվում կամ կիրառվում են Պատվերի կատարումն անհնարին դարձնող արգելքներ կամ սահմանափակումներ,
զ) առկա են Էփրիքոթ Կապիտալի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգով սահմանված դեպքեր,
է) Պատվերն ընդունելուց հետո պարզվում է, որ Հաճախորդի հաշիվներում առկա չեն բավարար միջոցներ (բացառությամբ Ոչ բավարար ծածկույթով (Մարժայով) Գործարքների)՝ Պատվերը կատարելու և այդ Պատվերի կատարման համար սահմանված վճարները գանձելու համար կամ Պատվերը կարող է չկատարվել նաև այն դեպքում, եթե Հաճախորդի հաշիվներում առկա Ակտիվները ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են:
5.11. Ընդհանուր առմամբ ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Էփրիքոթ Կապիտալը կարող է համախմբել Հաճախորդի Պատվերը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ հաճախորդի Պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝
1) որևէ Հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե Հաճախորդի պատվերը կատարվեր առանձին,
2) ընդհանուր առմամբ այն բխում է Հաճախորդի շահերից:
5.12. Եթե Էփրիքոթ Կապիտալն իր Հաճախորդի Պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է Հաճախորդին՝ բացառությամբ, եթե այլ բան է նախատեսված կողմերի գրավոր համաձայնությամբ: Տվյալ պարգայում Սակագներն հաշվարկվում են համամասնորեն:
5.13. Հաճախորդն իրավունք ունի ներկայացնել տրված Պատվերի հետկանչի Հաղորդագրություն: Հաղորդագրությունն ընդունվում է ի կատարումն, եթե տվյալ հետկանչվող Պատվերով Էփրիքոթ Կապիտալի կողմից դեռևս Գործարքի կնքման հայտը կամ օֆերտան չի բավարարվել և/կամ ակցեպտավորվել: Պատվերի հետ կանչման Հաղորդագրությունն համարվում է ընդունված Պատվերը Էփրիքոթ Կապիտալին հասնելու պահից: Հաճախորդի հետկանչման Հաղորդագրությունը ստանալու պահից մինչև Էփրիքոթ Կապիտալի կողմից ԱՀ-ից գործարքի կնքման հայտի հետ կանչման հաստատումն ընկած ժամանակահատվածում Պատվերին համապատասխան գործարքը կնքվելու դեպքում, Պատվերը հետ կանչելու մասին հաղորդագրությունը Էփրիքոթ Կապիտալի կողմից չի կատարվում:
5.14. Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Էփրիքոթ Կապիտալն անակցեպտ կարգով, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, գանձի Հաճախորդի Հաշվում առկա Ակտիվները՝ վերջինիս կողմից տրված Պատվերի հիման վրա կնքված Գործարքի Վերջնահաշվարկն ապահովելու նպատակով:
5.15. Պատվերի կատարումը մերժելու դեպքում Էփրիքոթ Կապիտալն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին էլեկտրոնային փոստով, Էփրիքոթ Կապիտալի հեռախոսային հավելվածի միջոցով կամ հեռախոսով՝ համապատասխան ծանուցում ուղարկելու միջոցով:

5.16. Կախված շուկայի տեսակից (բորսայական, արտաբորսայական, կարգավորված կամ չկարգավորված) և վայրից, գործարքի բնույթից և կատարման ժամկետներից՝ Էփրիքոթ Կապիտալի գործադիր տնօրենի կողմից կարող են սահմանվել Պատվերի ներկայացման և հետ կանչման վերջնաժամկետներ, որոնք ենթակա են հրապարակման Էփրիքոթ Կապիտալի պաշտոնական ինտերնետային կայքում և որոնց խախտմամբ ներկայացված Պատվերը կամ Պատվերի հետ կանչման Հաղորդագրությունը չի կատարվում: Նշված վերջնաժամկետները հանդիսանում են սույն Պայմանների անբաժանելի մասը և պարտադիր են բոլոր կողմերի համար:
5.17. Գործարքներ կնքելու համար ԱՀ-ների կամ Գործակալների կողմից մեկ Պատվերով գնվող/վաճառվող Ակտիվների նվազագույն քանակական/ծավալային սահմանափակումներ սահմանված լինելու դեպքում այդ սահմանափակումները տարածվում են նաև Հաճախորդի Պատվերների վրա, որի մասին Էփրիքոթ Կապիտալը տեղյակ է պահում Հաճախորդին:
5.18. Հաճախորդն ընդունում է, որ Պատվերներով ձեռքբերման ենթակա Ակտիվների շրջանակը, Գործարքների ծավալները, Պատվերների ներկայացման վերջնաժամկետները սահմանափակվում են Էփրիքոթ Կապիտալի՝ նշված Գործարքների կատարումը ապահովող Գործակալների և ԱՀ- ների կողմից սահմանված արժեթղթերի ցանկով, ծավալային սահմանափակումներով (սահմանաչափերով) և Գործակալների կամ ԱՀ-ներին տրված Պատվերների ներկայացման (կատարման) ժամկետային սահմանափակումներով: Ընդ որում՝ տվյալ ԱՀ-ում առևտրային օրվա ավարտից հետո և մինչև մյուս առևտրային օրվա սկսվելը ներկայացված Շուկայական պատվերը ենթակա է կատարման կամ ի կատարումն հաղորդման միայն տվյալ ԱՀ-ի կանոններով սահմանված առևտրային օրվա ընթացքում:
5.19. Այն դեպքում, երբ Էփրիքոթ Կապիտալի և Հաճախորդի շահերի միջև առաջանում է բախում, Էփրիքոթ Կապիտալն առաջնահերթությունը տալիս է Հաճախորդի շահերին՝ առաջնորդվելով Ֆիդուցիար պարտականությամբ:
5.20. Հաճախորդը կարող է էլեկտրոնային փոստով (հեռախոսազանգով Հաճախորդի կողմից պարտադիր հավաստմամբ), Համակարգի միջոցով Մարժայով գործարք կնքելու Պատվեր ներկայացնել և այդ նպատակով Էփրիքոթ Կապիտալից ստանալ փոխառություն, եթե նման հնարավորություն է նախատեսված Էփրիքոթ Կապիտալի հետ կնքված Պայմանագրով:
5.21. Հաճախորդի Հաշվում վերջինիս սեփական Ակտիվները (Հաշվում առկա Ակտիվների ընդհանուր արժեքի և տրամադրված փոխառության տարբերությունը) Սկզբնական մարժայի չափից պակաս լինելու դեպքում Էփրիքոթ Կապիտալը էլեկտրոնային փոստով և/կամ Համակարգի միջոցով Հաճախորդին տեղեկացնում է Հաշվում Սկզբնական Մարժայի չափի համալրման անհրաժեշտության մասին:
5.22. Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի չընդունել և ի կատարումն չփոխանցել Հաճախորդի հետագա Պատվերները, մինչև այն պահը, երբ Հաճախորդի Հաշվում առկա սեփական Ակտիվները կգերազանցեն Մարժայի Սկզբնական չափը: Որոշակի Ածանցյալ ֆինանսական գործիքներով Հաճախորդի բաց դիրքի առկայության դեպքում՝ տվյալ ԱՀ-ում Ածանցյալ ֆինանսական գործիքով Գործարքի կատարման օրվա Առևտրային նստաշրջանին նախորդած Առևտրային նստաշրջանի բացման պահին

(այսուհետ՝ Ապահովման պահ) Հաճախորդի Հաշվում Ածանցյալ ֆինանսական գործիքով Գործարքի կատարումից բխող պարտավորությունները բավարարելու համար անհրաժեշտ Ակտիվների անբավարարության դեպքում, Էփրիքոթ Կապիտալին սույնով իրավունք է վերապահվում փակել Ածանցյալ ֆինանսական գործիքով Հաճախորդի բաց դիրքը: Միևնույն ժամանակ Ապահովման պահին Ակտիվների բավարարության դեպքում՝ Ապահովման պահից մինչև Էփրիքոթ Կապիտալի կողմից տվյալ Ածանցյալ ֆինանսական գործիքով բաց դիրքի փակումը կամ Ածանցյալ ֆինանսական գործիքով Գործարքի փաստացի կատարումն ընկած ժամանակահատվածում Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի չընդունել և ի կատարումն չփոխանցել Հաճախորդի այն Պատվերները, որոնցով Գործարքների գինը գերազանցում է Հաճախորդի Հաշվում առկա Ակտիվների ընդհանուր արժեքի և Ածանցյալ ֆինանսական գործիքով Գործաքրի կատարման համար անհրաժեշտ միջոցների տարբերությունը:

5.23. Սույնով Հաճախորդը համաձայնվում է, որ թողարկողի որոշմամբ տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) տեղի ունենալու հետևանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում Էփրիքոթ Կապիտալը կամ վերջինիս Գործակալները իրավունք ունեն համապատասխան թողարկողին կամ ԱՀ-ում վաճառել առաջացած կոտորակային բաժնետոմսերը առանց Հաճախորդների լրացուցիչ համաձայնության:

5.24. Հաճախորդի կողմից գնված և վաճառված Ակտիվների (երկար և կարճ դիրքեր) հանրագումարի մասով վերջինիս Հաշվում սեփական Ակտիվները Նվազագույն մարժայից պակաս լինելու դեպքում Հաճախորդի ստանձնած պարտավորությունների բավարարման նպատակով Էփրիքոթ Կապիտալին իրավունք է վերապահվում առանց Հաճախորդի համաձայնությունը հայցելու փակել Հաճախորդի բաց դիրքը՝ գնելով/վաճառելով համապատասխան Ակտիվը:

5.25. Առաքում նախատեսող ֆյուչերսային պայմանագրերի դեպքում մինչև ֆյուչերսային պայամանագրի կատարումը Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի առանց հաճախորդից Պատվեր ստանալու փակել Ֆյուչերսային պայմանագրի գծով հաճախորդի դիրքը: Սույն կետում նշվալ տարբերակով ֆյուչերսային դիրքի փակման համար հաճախորդից գանձվում է տվյալ ֆյուչերսային պայմանագրով կատարվող գործարքների համար Սակագներով սահմանված վճարը:

5.26. Արժեթղթերով առուվաճառքն իրականացվում է «Առաքում վճարման դիմաց» (DVP) կամ Ազատ առաքում՝ համաձայնությամբ» (FOP) կամ «Ազատ առաքում» սկզբունքով:

5.27. Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Էփրիքոթ Կապիտալի դիլերային հայտերի նկատմամբ:

5.28. Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում և կարգավորվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և այդ շուկայի օպերատորի կողմից սահմանված կանոնների համաձայն:

5.29. Չկարգավորվող շուկայում Էփրիքոթ Կապիտալի կողմից գործարքները կնքվում և կատարվում են Օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

5.30. Բացի Հաճախորդի Պատվերի հիման վրա կնքված Գործարքի Վերջնահաշվարկի ապահովման դեպքերի՝ Հաշվից Ակտիվները կարող են փոխանցվել դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների հիման վրա, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, սույն պայմաններով և/կամ Հաճախորդի հետ կնքված պայմանագրերով/համաձայնագրերով սահմանված դեպքերում:
5.31. Էփրիքոթ Կապիտալը ներկայացված Պատվերների և կատարված Գործարքների մասով գրանցումներն իրականացնում է համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 8-ը ապրիլի 2008 թվականի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 4/07-ի:
5.32. Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդի Պատվերները կատարելիս հիմնվում է Հաճախորդների Պատվերների կատարման քաղաքականության վրա (այսուհետ՝ Հաճախորդների Պատվերների կատարման քաղաքականություն), որը հաստատվում է Էփրիքոթ Կապիտալի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Էփրիքոթ Կապիտալի մոտ խորհուրդ չի ձևավորվել), (այսուհետ նաև՝ «ժողով»):
5.33. Հաճախորդը հասկանում և համաձայնվում է, որ Էփրիքոթ Կապիտալից անկախ տեխնիկական և այլ հանգամանքները հաշվի առնելով, բացառված չէ, որ սույն Պայմաններում նշված միջոցներով ուղարկված Պատվերը չի հասնի Էփրիքոթ Կապիտալին, նրան կհասնի ուշացումով, ուղարկված լինի համապատասխան լիազորություն չունեցող երրորդ անձանց կողմից կամ վերջիններիս հայտնի դարձած լինի այլ միջոցներով, այդ թվում ցանցային խափանումների, ցանցային չարտոնված մուտքերի, գաղտնաբառերի չարտոնված օգտագործման և այլ միջոցներով ու եղանակներով: Սույնով Հաճախորդը համաձայնվում է, որ Էփրիքոթ Կապիտալը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված իրադարձությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, իսկ Պայմանագրում կամ սույն Պայմաններում նշված կարգով ստացված Պատվերը Էփրիքոթ Կապիտալի կողմից դիտարկվելու է որպես Հաճախորդից պատշաճ ստացված Պատվեր:
5.34.Հաճախորդը, ստորագրելով Պայմանագիրը, տալիս է իր համաձայնությունը Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաճախորդների Պատվերների կատարման քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:
5.35. Սույն Պայմանների 5.2, 5.3, 5.6 կետերի, 5.7 կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետի, 5.8, 5.10 և 5.33 կետերով Պատվերին վերաբերող դրույթների գործողությունը և պահանջները տարածվում են նաև Հանձնարարականի նկատմամբ այնքանով, որքանով չեն հակասում սույն Պայմաններով Հանձնարարականին վերաբերող առանձին կարգավորումներին:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԱՐԺԱՅԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Էփրիքոթ Կապիտալը կարող է Հաճախորդներին տրամադրել փոխառություններ Ակտիվների օտարման և/կամ ձեռքբերման գործարքներ կնքելու համար, պայմանով, որ Էփրիքոթ Կապիտալը հանդիսանում է նման գործարքների կողմ:

6.2. Էփրիքոթ Կապիտալը կարող է Հաճախորդներին տրամադրել փոխառության հետևյալ տեսակները.
1) Ակտիվների կարճ վաճառք, որի դեպքում Հաճախորդը Էփրիքոթ Կապիտալի միջոցով վաճառում է Էփրիքոթ Կապիտալից փոխառությամբ վերցված Ակտիվները,
2) Ակտիվների մարժայով գնում, որի դեպքում Հաճախորդը Էփրիքոթ Կապիտալի միջոցով գնում է Ակտիվները՝ գնման համար անհրաժեշտ գումարի մի մասը փոխառությամբ վերցնելով Էփրիքոթ Կապիտալից:
6.3. Սույն Պայմանների 6.2. կետում նշված փոխառության տեսակների տրամադրման ժամանակ Մարժայի նվազագույն չափը սահմանվում է 2 (երկու) տոկոս, եթե այլ բան հրապարակված չէ Էփրիքոթ Կապիտալի պաշտոնական վեբկայքում կամ սահմանված չէ Հաճախորդի հետ կնքված պայմանագրով/համաձայնագրով:
6.4. Յուրաքանչյուր Ակտիվի համար նախատեսված Մարժայի կոնկրետ չափը, ինչպես նաև յուրաքանչյուր Ակտիվի համար տրամադրվող փոխառությունների նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները Հաճախորդների համար հասանելի են դարձվում Էփրիքոթ Կապիտալի պաշտոնական ինտերնետային կայքում և/կամ Համակարգում, իսկ դրանց փոփոխություններն ուժի մեջ են մտնում Էփրիքոթ Կապիտալի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելու և/կամ Էփրիքոթ Կապիտալի կողմից Համակարգում համապատասխան Մարժայի չափը, կամ փոխառությունների նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները փոփոխելու պահից: Երբ Հաճախորդի Հաշվում առկա Ակտիվները նվազում են Սկզբնական մարժայի սահմանաչափից, ապա Հաճախորդը ծանուցվում է այդ մասին: Հաճախորդի Հաշվում առկա Ակտիվները Նվազագույն Մարժայի չափից նվազելու դեպքում Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի Հաճախորդի դիրք(եր)ի փակման միջոցով ապահովել Սկզբնական Մարժայի սահմանաչափը:
6.5. Հաճախորդներին գործարքների իրականացման համար փոխառությունների տրամադրումը իրականացվում է Էփրիքոթ Կապիտալի հայեցողությամբ՝ Հաճախորդի կողմից Պայմանագրում համապատասխան նշում կատարելու դեպքում, իսկ Պայմանագրի կնքումից հետո՝ Հաճախորդի ներկայացրած դիմումի հիման վրա:
6.6. Առանձնահատուկ դեպքերում, կախված Գործակալների կողմից Էփրիքոթ Կապիտալից փոխանցված Պատվերների կատարման առանձնահատկություններից, Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի Հաճախորդի Պատվերի կատարման համար անհրաժեշտ արժույթով դրամական միջոցների ապահովման համար առանց Հաճախորդի հանձնարարականի (ավտոմատ եղանակով) Գործակալի միջոցով Հաճախորդի հաշվին իրականացնել արտարժութային փոխարկում և/կամ կնքել կարճաժամկետ փոխարժեքային սվոփ պայմանագրեր:
6.7. Սույն Պայմանների 6.6 կետում սահմանված սվոփ գործարքների կնքման դեպքում Էփրիքոթ Կապիտալը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին է ներկայացնում այդ գործարքի էական պայմանները ներառող հաշվետվություն:
6.8. Հաճախորդը պարտավոր է Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման համար անհրաժեշտ Սկզբնական մարժան և բաց դիրքերի պահմանման համար անհրաժեշտ Նվազագույն Մարժան ապահովել իր Հաշվին:

6.9. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Ոչ բավարար ծածկույթով գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն: Հնարավոր է, որ Էփրիքոթ Կապիտալից անկախ հանգամանքներում, այդ թվում՝ շուկայի անբարենպաստ փոփոխությունների դեպքում Հաճախորդի համար վնասի/կորստի չափը ունենա էական մեծ ազդեցություն՝ պայմանավորված Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման առանձնահատկություններով, և այդ կորուստը/վնասը գերազանցի Հաշվում ներդրված Ակտիվների գումարը, որի դեպքում Հաճախորդը կրում է ամբողջական պատասխանատվություն թե կորստի/վնասի, և թե տրամադրված փոխառության ամբողջական մարման համար:
6.10. Հաճախորդի հետ լեվերիջով գործարք կնքելիս վերջինիս հետ համաձայնեցվում է գործարքին բնորոշ առանձնահատուկ պայմանները (առկայության դեպքում):

ԳԼՈՒԽ 7. ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Էփրիքոթ Կապիտալի անունից և հաշվին իրականացվող գործարքների (այսուհետ՝ Դիլերային գործարք) կատարման առաջարկները կազմվում են Էփրիքոթ Կապիտալի համապատասխան որակավորում ունեցող աշխատակցի կողմից (այսուհետ՝ Դիլեր) և ներկայացվում են Էփրիքոթ Կապիտալի գործադիր տնօրենի հաստատմանը:
7.2. Նախքան Դիլերային գործարքի կատարումը Դիլերը հավաստիանում է, որ Էփրիքոթ Կապիտալի համապատասխան հաշիվներին առկա են անհրաժեշտ դրամական միջոցներ և արժեթղթեր:
7.3. Դիլերային գործարքի կատարումից հետո Դիլերը Էփրիքոթ Կապիտալի գործադիր տնօրենին է ներկայացնում գործարքի կատարման վերաբերյալ հաշվետվություն, իսկ Էփրիքոթ Կապիտալի հաշվապահական գործառնություններն իրականացնող ստորաբաժանմանը տեղեկություններ է փոխանցում Դիլերային գործարքից բխող հաշվապահական ձևակերպումների իրականացման համար:

ԳԼՈՒԽ 8. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Պահառության գործունեության շրջանակում Էփրիքոթ Կապիտալն առաջարկում է հետևյալ ծառայությունները (Պահառության ծառայութուններ)՝
ա) Հաշվների բացում, վարում և փակում,
բ) արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցում,
գ) Գործակալների մոտ Հաճախորդի արժեթղթերի անվանատեր հանդես գալը, Արժեթղթերի պահպանում,
դ) արժեթղթերի պահառության և հաշվառման ընդունումը և հաշվառումից հանում,
ե) արժեթղթերի փոխանցում,
զ) արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողի կամ Գործակալի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից Թողարկողին կամ Գործակալին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցում: Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը և թույլտվությունը իր Հաշվի վերաբերյալ

տեղեկատվության բացահայտմանը այն ծավալով, որքանով որ դա անհրաժեշտ է իր հանդեպ Ծառայությունները պատշաճ մատուցելու նպատակով,
է) Հաշիվներով գործառնությունների և Հաճախորդի վերաբերյալ տեղեկանքների կազմում և տրամադրում,
ը) Հաճախորդի Հաշվին հաշվեգրված արժեթղթերի հետ կապված թողարկողների կորպորատիվ գործողությունների արտացոլում՝ արժեթղթերի փոխարկում, արժեթղթերի չեղյալ ճանաչում (մարում), արժեթղթերի բաժանում և համախմբում (կոնսոլիդացիան), արժեթղթերի գծով եկամուտների վճարում,
թ) Հաճախորդի Հաշվին հաշվեգրված արժեթղթերի գրավով կամ այլ ծանրաբեռնվածության գրանցում, Արժեթղթերի արգելադրում և Արժեթղթերի արգելադրման դադարեցում,
ժ) Հաշվից քաղվածքների և գործառնությունների մասին տեղեկանքների (հաշվետվությունների) տրամադրում,
ժա) Հաշվում ներառված տեղեկությունների փոփոխում:
8.2. Պահառության գործունեության օբյեկտ կարող են հանդիսանալ ՀՀ-ում թողարկված և շրջանառվող ցանկացած արժեթուղթ, ինչպես նաև օտարերկրյա արժեթղթերը:
8.3. Պահառության գործունեությունը ներառում է նաև Պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով Հաճախորդին ծառայությունների մատուցումը:
8.4. Արժեթղթերը պահառության հանձնելը չի հանգեցնում Էփրիքոթ Կապիտալին արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցման:
8.5. Սույն պայմանների 8.1 կետի «գ» և «ը» ենթակետերում նշված դեպքերում ծանուցումներ և տեղեկություններ ստանալու դեպքում Էփրիքոթ Կապիտալը պարտավոր չէ ստուգել այդ տեղեկությունների և ծանուցումների իսկությունը, հետևաբար չի երաշխավորում դրանց ճշգրտությունը, ամբողջականությունը կամ ժամանակին տրամադրելը՝ այդ թվում հաշվի առնելով այն, որ նման ծանուցումները և տեղեկությունները փոխանցվում են Գործակալների և հաջորդականորեն նրանց ենթագործակալների շղթայի միջոցով: Ուստի Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով Թողարկողի կամ Գործակալի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից Թողարկողին կամ Գործակալին ուշացած և/կամ սխալ/թերի տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցման արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:
8.6. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ եթե որևէ իրադարձության, այդ թվում՝ կրիպտոակտիվների հիմքում ընկած ԱԳՏ-ի փոփոխությունների հետևանքով արժեթղթի սահմանմանը համապատասխանող և Հաճախորդին պատկանող կրիպտոակտիվներից բխող կամ դրանցով ամրագրված իրավունքները փոփոխվում են, կամ ծագում են նոր իրավունքներ, կամ ստեղծվում են նոր կրիպտոակտիվներ, ապա Էփրիքոթ Կապիտալը իր հայեցողությամբ և, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, կարող է իր բացառիկ հայեցողությամբ որոշի՝ կրիպտոակտիվներից բխող որ իրավունքներին է աջակցելու կամ արդյոք կապահովի նոր իրավունքների կամ նոր

կրիպտոակտիվների արտացոլումը Հաճախորդի Հաշվին և դրանց սպասարկումը՝ հաշվի առնելով դրա արդյունքում առաջացող տեխնիկական, գործառնական կամ իրավական բնույթի խնդիրները, ինչպես նաև ՓԼԱՖ օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

ԳԼՈՒԽ 9. ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ ԵՎ ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Բրոքերային ծառայությունների մատուցման և դրա ներքո Գործարքների կնքման համար Էփրիքոթ Կապիտալն իրականացնում է վերջնահաշվարկ (settlement)՝ Հաճախորդի Հաշվից փոխանցելով և Հաշվին մուտքագրելով գործարքների կատարման համար պահանջվող և դրանց արդյունքում ստացվող միջոցները, ներառյալ՝ ըստ անհրաժեշտության փոխառությամբ տրամադրելով (Ոչ բավարար ծածկույթով գործարքների դեպքում) վերջնահաշվարկի համար պահանջվող արժույթ՝ Պայմաններում նշված կարգով և պայմաններով:
9.2 Էփրիքոթ Կապիտալը Վերջնահաշվարկն իրականացնում է առանց Հաճախորդից լրացուցիչ Հանձնարարականներ ստանալու: Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդն համաձայնում են, որ Պատվերը ինքնաբերաբար հանդիսանում է նաև Հաճախորդի Ակտիվներով Վերջնահաշվարկ կատարելու Հանձնարարական:
9.3. Հաճախորդը պարտավոր է Էփրիքոթ Կապիտալին ապահովել Վերջնահաշվարկի համար անհրաժեշտ Ակտիվներով՝ սույն Պայմաններին համապատասխան Հաճախորդի Հաշվում համապատասխան Ակտիվների առկայությունը ապահովելով: Սույն կետում նշված պարտավորությունը չի տարածվում Ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելու դեպքերի վրա, սակայն այդ դեպքում Հաճախորդի Հաշվում պետք է ապահովվի տվյալ գործարքի համար սահմանված Սկզբնական մարժան:
9.4. Հաշվից դրամական միջոցների ելքագրում և փոխանցում տեղի է ունենում Պայմանների Հավելված 2-ով պահանջվող տեղեկատվությունը պարունակող ծանուցումը Էփրիքոթ Կապիտալին տրամադրելու դեպքում Հաճախորդի՝ այն բանկում բացված հաշվին, որտեղից նախկինում Հաշվին դրամական միջոցներ են փոխանցվել: Այլ հաշվին Հաշվից Ակտիվների ելքագրում և փոխանցում իրականացնելու դեպաքում Էփրիքոթ Կապիտալը կարող է Հաճախորդից պահանջել լրացուցիչ հիմնավորումներ/պարզաբանումներ, որոնք թույլ կտան կայացնել նման փոխանցումը կատարելու վերաբերյալ տեղեկացված որոշում և թույլ չտալ սույն պայմաններով, Էփրիքոթ Կապիտալի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգով և այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումներ: Նման դեպքում Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի կասեցնել ելքագրման իրականացումը մինչև Հաճախորդի կողմից համապատասխան փաստաթղթերի ու տեղեկությունների տրամադրումը:
9.5. Էփրիքոթ Կապիտալի կողմից արժեթղթերի վերաբերյալ կատարված գրառումները հավաստում են արժեթղթերի նկատմամբ Հաճախորդների իրավունքները: Պահառության հանձնված արժեթղթերի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված՝ Հաճախորդի Հաշվում համապատասխան գրառում կատարելու պահից:

9.6. Էփրիքոթ Կապիտալը Հաշվում գրառումներ կատարում է միայն նման գրառումներ կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:
9.7. Էփրիքոթ Կապիտալի կողմից Գործառնությունները իրականացվում են էլեկտրոնային եղանակով:
9.8. Էփրիքոթ Կապիտալը Գործառնություններն իրականացնում է Հաճախորդի Հանձնարարականների, Գործակալի կողմից ստացված տեղեկությունների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում համապատասխան իրավասություն ունեցող անձանց կողմից տրված փաստաթղթերի հիման վրա:
9.9. Որպես Հանձնարարական կարող է հանդիսանալ հետևյալը՝
ա) Հաճախորդի, Հաճախորդի լիազորված ներկայացուցչի, այլ ռեեստրավարի կամ պահառուի, պահառուի պաշտոնատար անձանց և Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց կողմից սույն Պայմանների պահանջներին համապատասխան լրացված թղթային կամ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստով (Հաճախորդն իրավունք ունի փոխել կամ ավելացնել նոր էլեկտրոնային փոստի հասցե՝ թղթային կամ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից նախապես Էփրիքոթ Կապիտալին նոր հասցեն պարունակող ծանուցում ուղարկելու պայմանով) կամ «Իմ Հաշիվը» մոդուլի միջոցով տրված հանձնարարականը,
բ) ոչ քաղաքացիաիրավական գործարքի արդյունքում (դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի, որոշումների հիման վրա) արժեթղթերի նկատմամբ իրավունքի փոխանցման դեպքում՝ այդ փոխանցումը հիմնավորող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթղթերը:
9.10. Եթե Հաճախորդի Հաշվում հաշվառվող որևէ արժեթուղթ սեփականության իրավունքով պատկանում է մի քանի անձանց (համասեփականատերերի), ապա տվյալ արժեթղթով պահառության գործառնությունն իրականացվում է բոլոր համասեփականատերերի կողմից ստորագրված հանձնարարականի կամ վերջիններիս կողմից լիազորված անձի տված հանձնարարականի հիման վրա:
9.11. Ստացված տեղեկությունների, փաստաթղթերի և պարզաբանումների հիման վրա՝ այդ թվում, բայց չսահմանափակվելով Էփրիքոթ Կապիտալի Ներքին դիտարկումների մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականների, Պատվերների, դիմումների և/կամ հարցումների կատարումը: Սույն կետով սահմանված գործողությունները կատարելու համար Էփրիքոթ Կապիտալը կարող է սույն Պայմաններով սահմանված Գործառնությունների կատարման ժամկետները երկարաձգել այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է պահանջվող տեղեկատվությունը/իրավական կարծիքը ստանալու համար: Սույնով Հաճախորդը համաձայնվում է, որ Էփրիքոթ Կապիտալը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված դեպքերում Հաճախորդի կրած վնասների համար:
9.12. Հաճախորդը պարտավոր է Պայմանագրով սահմանված ժամկետում Էփրիքոթ Կապիտալին ներկայացնել իր Հաշվում ներառված տեղեկությունների փոփոխությունները:
9.13. Էփրիքոթ Կապիտալն իրականացնում է Հաճախորդի Հաշվում առկա արժեթղթերի թողարկողի կամ արժեթղթերի մասին ռեեստրում առկա տեղեկությունների

փոփոխությունների հետ կապված Գործառնություններ՝ Գործակալից ստացված ծանուցման հիման վրա՝ Համապատասխան փաստաթղթերը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

9.14. Էփրիքոթ Կապիտալն իրականացնում է անվանական արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված Գործառնություններ Գործակալից ստացված հարցման հիման վրա՝ այն ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

9.15. Էփրիքոթ Կապիտալի կողմից արժեթղթերի հաշվառումը կատարվում է Կանոնակարգ 33-ում, իսկ «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված «կրիպտոակտիվ» հասկացությունը բավարարող արժեթղթերի դեպքում՝ դրանց պահառությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և պահանջների համաձայն:

9.16. Հաճախորդի Հաշվին հաշվեգրված արժեթղթերի փոխարկումը, արժեթղթերի բաժանումը և համախմբումը (կոնսոլիդացիան) տեղի է ունենում Գործակալից համապատասխան տեղեկությունները ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

9.17. Հաճախորդի Հաշվին այլ պահառուների և անձանց կողմից փոխանցվող արժեթղթերի պահառության ընդունումն իրականացվում է Հաճախորդի Հանձնարարականի հիման վրա, եթե այլ բան սահմանված չէ սույն պայմաններով, որն ապահովվում է համապատասխան Հանձանարականը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

9.18. Սույն պայմանների համաձայն Հաճախորդի հաշվով Գործառնությունների կատարումը ենթակա է մերժման, եթե Հաճախորդի Հաշվում առկա չեն այդ Գործառնությունների դիմաց վճարում կատարելու համար բավարար Ակտիվներ կամ եթե Հաճախորդի Հաշիվում առկա Ակտիվները ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են:

9.19. Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի իր հայեցողությամբ մերժել Ակտիվների ելքագրումը Հաշվից, եթե Էփրիքոթ Կապիտալի ներքին գնահատմամբ՝ հաշվի առնելով Հաճախորդի կողմից այդ Ակտիվների օգտագործմամբ կնքված Գործարքների բնույթը և ռիսկայնությունը՝ Հաշվից միջոցների ելքագրումը կարող է հանգեցնել Հաճախորդի և (կամ) Էփրիքոթ Կապիտալի համար զգալի կորուստների:

9.20. Այն դեպքում, երբ Հաճախորդի համար Էփրիքոթ Կապիտալում բացվել է անվանատիրոջ հաշիվ, Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի պահանջել Հաճախորդից բացահայտել անվանատիրոջ հաշվի ներքո գտնվող իրական շահառու հանդիսացող անձանց և համապատասխան տեղեկություններ/փաստաթղթեր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» ընթացակարգին համապատասխան: Հաճախորդի կողմից վերանշյալ տեղեկությունները/փաստաթղթերը չտրամադրվելու դեպքում Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի Պատվերի/Հանձնարարականի կատարումը մերժել:

9.21. Սույն Պայմանների որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ կարգելի Էփրիքոթ Կապիտալին Հաճախորդին սպասարկելիս սխալ կամ բացթողում հայտնաբերելու դեպքում այն շտկել: Հաճախորդը համաձայնվում է, որ նման սխալները

կամ բացթողումները, անկախ նրանից՝ շահույթ, թե վնաս են առաջացրել (որն ըստ այդմ կրելու է Հաճախորդը), կարող են շտկվել, և Հաճախորդի Հաշվին կարող է փոխանցվել կամ Հաշվից հանվել այնքան Ակտիվներ, որքան անհրաժեշտ է համապատասխան սխալը կամ բացթողումը շտկելու համար:

ԳԼՈՒԽ 10. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆԵՐ

10.1. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված Էփրիքոթ Կապիտալի կողմից իրականացվում են Գործառնությունների հետևյալ տեսակները.
ա) Ազատ առաքում.
բ) Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում.
գ) Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ FOP փոխանցում:
10.2. Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման Գործառնությունը կատարելու համար Հաճախորդը Էփրիքոթ Կապիտալին ներկայացնում է արժեթղթերի փոխանցման Հանձնարարական (բացառությամբ սույն Պայմաններով սահմանված դեպքերի, երբ Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման Հանձնարարականը կարող է ներկայացվել այլ անձի կողմից) հետևյալ տեղեկություններով.
1) Արժեթղթեր փոխանցող և ստացող անձանց անունները և ազգանունները (անվանումները).
2) արժեթղթեր փոխանցող և ստացող անձանց պահառության հաշիվների համարները.
3) փոխանցվող արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն (կամ նույնականացնող այլ տվյալ).
4) փոխանցման ենթակա արժեթղթերի քանակը.
5) արժեթղթերի փոխանցման Գործառնության հիմքերի մասին էական տվյալները՝ գործարքի կնքման օրը և գործարքի դրամական հատուցման չափը (առկայության դեպքում).
6) նշում արժեթղթերի փոխանցման իրական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջ հաշվին):
10.3. «DVP փոխանցում» սկզբունքով արժեթղթերի փոխանցման/ստացման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.
1) արժեթղթեր փոխանցող/ստացող և ստացող/փոխանցող կողմերի անունները և ազգանունները (անվանումները).
2) նշում արժեթղթերի փոխանցման/ստացման իրական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են Անվանատիրոջ հաշվին/հաշվից).
3) արժեթղթերը փոխանցողի/ստացողի պահառության հաշվի համարը.
4) փոխանցման ենթակա Արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն (կամ նույնականացնող այլ տվյալ).
5) արժեթղթերի քանակը.
6) վճարման ենթակա գումարի չափը.
7) վճարման ենթակա գումարի արժույթը.
8) գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում).

9) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
10) Վերջնահաշվարկի իրականացման համար նախատեսված այլ տեղեկությունները (առկայության դեպքում):
10.4. «FOP փոխանցում» սկզբունքով արժեթղթերի փոխանցման/ստացման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.
1) արժեթղթեր փոխանցող/ստացող և ստացող/փոխանցող կողմերի անունները և ազգանունները (անվանումները).
2) արժեթղթերը փոխանցողի/ստացողի պահառության հաշվի համարը.
3) փոխանցման ենթակա Արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն (կամ նույնականացնող այլ տվյալ).
4) արժեթղթերի քանակը.
5) գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում).
6) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
7) Վերջնահաշվարկի իրականացման համար նախատեսված այլ տեղեկությունները (առկայության դեպքում):
10.5. Հաճախորդի Հաշվում առկա արժեթղթերի փոխանցումը Էփրիքոթ Կապիտալի մոտ գտնվող՝ Հաճախորդի այլ Հաշվին կամ այլ Հաճախորդի Հաշվին կամ Էփրիքոթ Կապիտալի Հաճախորդ չհանդիսացող անձին կատարվում է հետևյալ դեպքերում.
1) Հաճախորդի նախաձեռնությամբ՝
ա) Էփրիքոթ Կապիտալի միջոցով արժեթղթերի վաճառք Պատվերի հիման վրա,
բ) այլ ձևով արժեթղթերի վաճառք՝ վաճառքի փաստի հավաստումը (օրինակ՝ առքուվաճառքի պայմանագիր) ստանալու դեպքում և Հաճախորդի Հանձնարարական հիման վրա համապատասխան գործարքի պայմաններով սահմանված ժամկետներում,
գ) արժեթղթերի փոխանցում ազատ առաքմամբ՝ Էփրիքոթ Կապիտալում գտնվող Հաճախորդի մեկ այլ Հաշվին՝ Հաճախորդի Հանձնարարականի հիման վրա,
դ) արժեթղթերի փոխանցում այլ դեպքերում Արժեթղթերի փոխանցման հանձնարարականը (անհրաժեշտության դեպքում նաև համապատասխան հիմնքերը) ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե տվյալ հանձնարարականում փոխանցման ավելի երկար ժամկետ նշված չէ:
2) դատարանի վճռով ազատ առաքմամբ՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի, որոշման կամ դատավճռի պատճենի, ինչպես նաև դրա հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից կայացված համապատասխան որոշման պատճենի (նման որոշման առկայության դեպքում), արժեթղթերը փոխանցելու վերաբերյալ դիմումի հիման վրա՝ համապատասխան փաստաթղթերը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ եթե փոխանցման ավելի երկար ժամկետ նշված չէ,
3) նվիրատվության (նվիրաբերության) հիման վրա FOP փոխանցմամբ՝ շահագրգիռ կողմի պահանջով համապատասխան նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը Էփրիքոթ Կապիտալի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունները և արժեթղթերը փոխանցելու վերաբերյալ Հանձնարարականը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:
4) ժառանգության հիման վրա ազատ առաքմամբ՝ համապատասխան ժառանգության փաստը հավաստող փաստաթղթերը (ժառանգի կողմից ներկայացվում է

ժառանգության իրավունքի վկայագիրը և/կամ դատարանի համապատասխան որոշման պատճենը և ՀՀ օրենսդրությամբ ժառանգության ճանաչման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները, Էփրիքոթ Կապիտալի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ) և արժեթղթերը փոխանցելու վերաբերյալ դիմումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,
5) գրավադրված արժեթղթերի փոխանցում՝ գրավի պայմանագրի պատճենի, արժեթղթերի փոխանցման հանձնարարականի հիման վրա՝ համապատասխան փաստաթղթերը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,
6) արժեթղթերի փոխանցում Հաշվի փակման կապակցությամբ:
10.6. Էփրիքոթ Կապիտալի միջնորդությամբ արժեթղթերի փոխանցման Գործառնություն կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե ներկայացվել են սույն Պայմաններով կամ այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը և բացակայում են Էփրիքոթ Կապիտալից անկախ խոչընդոտող (այդ թվում տեխնիկական բնույթի) հանգամանքներ:
10.7. «Առաքում վճարման դիմաց» և «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքներով արժեթղթերի փոխանցման Հանձնարարականները Հաճախորդի կողմից կարող է հետ կանչվել և/կամ միակողմանիորեն փոփոխվել մինչև հանդիպակաց կողմից մուտքագրված Հանձնարարականի հետ համընկման պահը, իսկ դրանից հետո՝ կողմերի համաձայնությամբ: Հանձնարարականի կատարումից հետո Հանձնարարականը հետ կանչվել և/կամ միակողմանիորեն փոփոխվել հնարավոր չէ:

ԳԼՈՒԽ 11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐՎԱԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

11.1. Արժեթղթերի գրավի և երրորդ անձանց այլ իրավունքների գրանցումը և գրանցման դադարեցումը իրականացվում են ՀՀ օրենսդրության և արժեթղթերի գրավի պայմանագրի պահանջներին համապատասխան:
11.2. Արժեթղթերի գրավի իրավունքը գրանցելու համար Հաճախորդ-գրավատուն պետք է ներկայացնի հետևյալ տեղեկությունները.
1) գրավադրման ենթակա արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն (կամ այլ նույնականացնող տվյալ),
2) գրավատու և գրավառուի արժեթղթերի/պահառության հաշվի համարները.
3) գրավադրման ենթակա արժեթղթերի քանակը.
4) գրավադրման դադարեցման ամսաթիվը (առկայության դեպքում).
5) գրավառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ գրավառուին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը (առկայության դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, ՀՎՀՀ կամ դրան համարժեք այլ համարը (առկայության դեպքում), գրավառուի հասցեն, կապի միջոցները.

6) արժեթղթերի գրավադրման հանձնարարականը.
7) արժեթղթերի գրավի պայմանագիրը.
8) Էփրիքոթ Կապիտալի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ և փաստաթղթեր:
11.3. Արժեթղթերի գրավադրման դեպքում արժեթղթերով Գործառնություններ կատարվում են միայն գրավառուի և գրավատուի կողմից համատեղ ստորագրված հանձնարարականների հիման վրա:
11.4. Արժեթղթերի հաջորդող գրավով պայմանավորված Գործառնությունը Էփրիքոթ Կապիտալի կողմից կատարվում է, եթե այն արգելված չէ գրավադրվող արժեթղթերի թողարկման պայմաններով և (կամ) արժեթղթերի գրանցման հայտարարագրում:
11.5.Գրավադրված արժեթղթերի՝ արտադատական կարգով իրացման հետ կապված՝ արժեթղթերի փոխանցման համար Հաճախորդ-գրավառուն Էփրիքոթ Կապիտալին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները՝
1) գրավադրված արժեթղթերի՝ արտադատական կարգով իրացման հնարավորություն նախատեսող պայմանագիր/համաձայնագիր.
2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով գրավատուին կամ այլ պարտապանին (եթե գրավատուն պարտապանը չէ) պատշաճ ծանուցումը հիմնավորող տեղեկություններ (փաստաթղթեր).
3) Պայմաններով սահմանված արժեթղթերի փոխանցման Հանձնարարական.
4) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ փաստաթղթեր (այդպիսիք սահմանված լինելու դեպքում).
5) Էփրիքոթ Կապիտալի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ (առկայության դեպքում):
11.6. Սույն պայմանների 11.5 կետում նշված գործառնության իրականացման դեպքում Էփրիքոթ Կապիտալը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստուգելով ներկայացված փաստաթղթերը և համոզվելով, որ պահպանվել են Պայմանների և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, կատարում է համապատասխան Հանձնարարականը, Հակառակ դեպքում Հանձնարարականի կատարումը մերժվում է:
11.7. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցումը կարող է կատարվել հետևյալ դեպքերում.
1) գրավի իրավունքի դադարեցման ամսաթվին.
2) գրավի իրավունքի դադարեցման վերաբերյալ Հաճախորդ-գրավատուի Հանձնարարականի և գրավառուի համաձայնությունը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում.
3) գրավի առարկա հանդիսացող՝ տվյալ դասի և/կամ տեսակի արժեթղթերը չեղարկվել կամ մարվել են.
4) դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ այլ իրավասու մարմնի համապատասխան որոշման հիման վրա.
5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
11.8. Արժեթղթերի գրավադրումը և արժեթղթերի գրավադրումից հանելու Հանձնարարականը Էփրիքոթ Կապիտալի կողմից կատարվում է այն ներկայացնելու

պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ եթե սույն պայմաններով այլ բան սահմանված չէ:

ԳԼՈՒԽ 12. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉՈՒՄ, ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ ԵՎ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

12.1. Էփրիքոթ Կապիտալն արժեթղթերի չեղյալ ճանաչելու մասին Գործառնությունը կատարում է Գործակալների կողմից համապատասխան փաստաթղթեր ստանալու դեպքում, բացառությամբ երբ Էփրիքոթ Կապիտալը հանդիսանում է Պահպանման վայր Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում:
12.2. Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաշվին առկա Ակտիվները կարող են արգելադրվել Հաճախորդի Հանձնարարականով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կամ Էփրիքոթ Կապիտալի նախաձեռնությամբ: Էփրիքոթ Կապիտալն իր նախաձեռնությամբ կարող է արգելադրել/սառեցնել Հաշվին առկա Ակտիվները՝ որպես Հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց և չկատարել դրանց փոխանցման հանձնարարականները, եթե Հաճախորդը չի կատարում Էփրիքոթ Կապիտալի հանդեպ իր ստանձնած պարտավորությունները:
12.3. Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաշվին առկա Ակտիվների արգելադրումը դադարեցվում է Հաճախորդի Հանձնարարականով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ Էփրիքոթ Կապիտալի նախաձեռնությամբ՝ Հաճախորդին ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
12.4. Եթե Հաշվին առկա Ակտիվները արգելադրվել են ոչ Հաճախորդի նախաձեռնությամբ, ապա արգելադրումը չի կարող դադարեցվել Հաճախորդի նախաձեռնությամբ:

ԳԼՈՒԽ 13. ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄԸ

13.1. Մատուցվող Ծառայությունների դիմաց Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդից գանձում է վճարներ՝ ըստ Սակագների: Հաճախորդի համար իրականացված Գործառնությունների հետ կապված Էփրիքոթ Կապիտալի բոլոր ծախսերը փոխհատուցվում են Հաճախորդի կողմից՝ փաստացի արժեքով:
13.2.Սակագները հաստատվում է Էփրիքոթ Կապիտալի գործադիր տնօրենի որոշմամբ:
13.3. Սակագները կարող են միակողմանիորեն փոխվել Էփրիքոթ Կապիտալի կողմից և դրանց բարձրացման դեպքում ուժի մեջ են մտնում Հաճախորդին այդ փոփոխության մասին ծանուցելու և/կամ Էփրիքոթ Կապիտալի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու օրվան հաջորդող 21-րդ օրը:
13.4. Հաճախորդը պարտավոր է հատուցել Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաճախորդի Պատվերների/Հանձնարարականների կատարման և/կամ ի կատարումն հաղորդման հետ կապված գործառնական ծախսերը, որոնք կարող են առաջանալ Էփրիքոթ Կապիտալի Գործակալների կողմից երրորդ անձանց ներգրավմամբ գործարքներ կնքելու և վերջնահաշվարկ ապահովելու անհրաժեշտությունից, մասնավորապես՝ ԱՀ-

ների և/կամ այլ միջնորդների կողմից Գործակալներից գանձվող վճարները (բացառությամբ Գործակալների հետ Էփրիքոթ Կապիտալի կնքած պայմանագրերով սահմանված սակագներով գանձվող ստանդարտ միջնորդավճարների), որոնք կարող են տարբեր լինել՝ կախված ԱՀ-ից, գործարքի տեսակից, ծավալից և այլ հանգամանքներից: Նման ծախսերը արտացոլվում են Սակագներում: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում արտացոլվում են թե՛ նշված ծախսերը, և թե՛ դրանց հատուցման համար Էփրիքոթ Կապիտալի կողմից իրականացված գանձումներն ու պահումները:

13.5. Սույն Պայմաններում և Պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումները, տոկոսները, միջնորդավճարները, տույժերն ու տուգանքները և Հաճախորդի՝ Էփրիքոթ Կապիտալի նկատմամբ ցանկացած այլ տեսակի պարտավորությունների գումարները Էփրիքոթ Կապիտալն իրավասու է անակցեպտ գանձել Հաճախորդի՝ Հաշվում առկա դրամական միջոցներից՝ իսկ Հաճախորդը պարտավոր է ապահովել համապատասխան դրամական միջոցների առկայությունը Հաշվում: Հաճախորդի հաշվին բավարար դրամական միջոցներ չլինելու դեպքում Հաճախորդը սույնով լիազորում է Էփրիքոթ Կապիտալին սույն պայմաններում և Պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումների, տոկոսների, միջնորդավճարների, տույժերի ու տուգանքների, ինչպես նաև Էփրիքոթ Կապիտալի նկատմամբ ցանկացած այլ տեսակի պարտավորությունների գումարները գանձելու նպատակով իրացնել Հաճախորդի Հաշվում առկա այլ Ակտիվները դրանց շուկայական իրացվելի գնով՝ գործադրելով լավագույն ջանքեր Հաճախորդի համար առավել բարենպաստ պայմաններով դրանք իրացնելու համար: Այդուհանդերձ Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում Ակտիվների իրացման գնի առնչությամբ Հաճախորդի կողմից անհամաձայնություն հայտնելու դեպքում:

13.6. Այն դեպքում, երբ Հաճախորդը Էփրիքոթ Կապիտալին չի կատարում որևէ գումարի վճարում՝ կապված մատուցված Ծառայությունների (այդ թվում՝ ծախսերի հատուցումներ, տոկոսներ, միջնորդավճարներ, տույժեր ու տուգանքներ) կամ որևէ այլ պարտավորությունների հետ և արդյունքում Հաճախորդի Հաշվին առաջանում է բացասական մնացորդ, Հաճախորդը հասկանում և համաձայնվում է, որ Էփրիքոթ Կապիտալը, որպես հատուցում, իրավասու է այդ գումարի նկատմամբ հաշվարկել տոկոսներ՝ ըստ գործող Սակագների, եթե Էփրիքոթ Կապիտալի և Հաճախորդի մեջև կնքված համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

13.7. Հաճախորդը հասկանում և համաձայնվում է, որ Սակագներով կարող է սահմանվել հավելյալ վճար այն Գործարքների համար, որոնք Հաճախորդը կարող է կնքել Համակարգի միջոցով ինքնուրույն (Համակարգի օգտատեր լինելու դեպքում), սակայն նախընտրում է համապատասխան Գործարք կնքելու Պատվերը Էփրիքոթ Կապիտալին կատարման ներկայացնել առանց համակարգի օգտագործման:

ԳԼՈՒԽ 14. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

14.1.Եթե Էփրիքոթ Կապիտալը կատարել է Հաճախորդի Պատվերը, ապա անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Հաճախորդին տրամադրում է Պատվերի կատարման մասին հաշվետվություն՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 8-ը ապրիլի 2008 թվականի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 4/07-ի:
Եթե Հաճախորդի Պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդին է ներկայացնում Պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:
14.2.Յուրաքանչյուր Գործառնության կատարման ավարտից հետո ըստ պահանջի, ոչ ուշ, քան մինչև նման պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը Էփրիքոթ Կապիտալը սույն պայմաններով նախատեսված անձանց տրամադրում է գրառման կատարման կամ մերժման մասին հաշվետվություն, քաղվածք, ծանուցում կամ տեղեկանք:
14.3. Էփրիքոթ Կապիտալը ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ Հաճախորդին տրամադրում է հաշվետվություն, տեղեկանք կամ քաղվածք Հաճախորդի հաշվին իրականացված Գործարքների, կատարված Գործառնությունների և Հաշվի մնացորդի վերաբերյալ:
14.4. Հաճախորդն իրավունք ունի Էփրիքոթ Կապիտալից ստանալ նաև հետևյալ տեղեկությունները.
1) տեղեկանք Հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ.
2) Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ:
14.5. Ինչպես սույն Պայմանների 14.1, 14.2 և 14.3 կետերում նախատեսված հաշվետվությունները, քաղվածքները տեղեկանքները (ստանդարտ հաշվետվություններ, քաղվածքներ տեղեկանքներ) այնպես էլ Հաճախորդի պահանջով այլ հաշվետվությունները, քաղվածքները տեղեկանքները (ոչ ստանդարտ հաշվետվություններ, քաղվածքներ տեղեկանքներ) Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաճախորդներին տրամադրում են Սակագներով սահմանված պայմաններով:
14.6. Սույն գլխում նշված հաշվետվությունները, քաղվածքները կամ տեղեկանքները Հաճախորդին ներկայացվում են թղթային՝ Էփրիքոթ Կապիտալի գտնվելու վայրում առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային եղանակով՝ Պայմանագրում նշված կամ սույն Պայմանների համաձայն Հաճախորդի կողմից տրամադրված հասցեներով: Հաշվետվությունը, քաղվածքը, տեղեկանքը համարվում է ներկայացված Հաճախորդներին՝ Պայմանագրում նշված Էփրիքոթ Կապիտալի էլ. փոստից ուղարկվելու դեպքում և համարվում են ընդունված, եթե Հաճախորդը այն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում գրավոր չի առարկում դրանց բովանդակության վերաբերյալ: Հաշվետվությունը, տեղեկանքը, քաղվածքը կարող է լինել չստորագրված՝ իրավասու էլ. փոստի հասցեից ուղարկվելու դեպքում և այն համարվում է վավեր և ունի նույն իրավական ուժը ինչ հասարակ թղթային ձևով ներկայացված հաշվետվությունը:
14.7. Էփրիքոթ Կապիտալը Կենտրոնական բանկին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց տեղեկություններ է տրամադրում Հաճախորդների և նրանց հաշիվների վերաբերյալ Պայմանագրում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

14.8. Հաճախորդի հետ Պայմանագիրը լուծվելուց և/կամ Հաշիվը փակվելուց հետո Հաճախորդի պահանջով Էփրիքոթ Կապիտալը տրամադրում է տեղեկատվություն փակված հաշվի վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում և Սակագներով սահմանված պայմաններով:

ԳԼՈՒԽ 15. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ, ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

15.1. Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդների Հաշվում առկա Ակտիվների պաշտպանությունը ապահովելու նպատակով ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.
1) առանձնացված հաշվառում. Էփրիքոթ Կապիտալն առանձին հաշիվներ է բացում և վարում յուրաքանչյուր հաճախորդի, ինչպես նաև իր և իր հաճախորդների Ակտիվների հաշվառման համար՝ սեփական արժեթղթերի հաշիվ և անվանատիրոջ հաշիվ (հաճախորդներին պատկանող արժեթղթերի համար) բացելով Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող Գործակալների մոտ (բացառությամբ այն դեպքի, երբ Էփրիքոթ Կապիտալը տվյալ արժեթղթի գծով հանդիսանում է վերջնական պահառու կամ պահպանման վայր), և Հաճախորդի հաշվում առկա Ակտիվները հաշվառում և Հաշիվները վարում է այնպիսի եղանակով, որը թույլ կտա ցանկացած պահի և առանց ուշացման առանձնացնել յուրաքանչյուր Հաճախորդի Ակտիվները այլ Հաճախորդների, ինչպես նաև Էփրիքոթ Կապիտալի սեփական Ակտիվներից:
2) ներքին աուդիտ. Էփրիքոթ Կապիտալի ներքին աուդիտի գործառույթների մեջ է մտնում Էփրիքոթ Կապիտալի գործառնական գործունեության հետ կապված ռիսկերի ուսումնասիրումը նվազագույնի հասցնելով Էփրիքոթ Կապիտալի աշխատակիցների կողմից պատահական սխալների և չարաշահումների ռիսկը,
3) Պատվերների կատարման հստակ քաղաքականության կիրառում,
4) Էփրիքոթ Կապիտալի և Հաճախորդների, ինչպես նաև Էփրիքոթ Կապիտալի տարբեր Հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականության կիրառում,
5) մասնակցություն ներդրողների փոխհատուցման, Ակտիվների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում (առկայության դեպքում):
15.2. Էփրիքոթ Կապիտալը պարբերաբար իրականացնում է համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ առկա՝ Հաճախորդների Ակտիվների վերաբերյալ տեղեկատվության միջև, որոնց մոտ պահվում են Հաճախորդների Ակտիվները:
15.3. Հաճախորդներին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը ենթակա են առանձին հաշվառման այն արժեթղթերից, որոնք արժեթղթերի սեփականատեր չհանդիսացող անձը օգտագործում, տիրապետում կամ տնօրինում է օրենքով սահմանված իրավասության կամ արժեթղթերի սեփականատիրոջ հետ կնքված հանձնարարության, գործակալության, կոմիսիայի, հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա: Առանձին հաշվառման ենթակա են նաև իրավունքների սահմանափակումներով արժեթղթերը: Արժեթղթերի նկատմամբ

սեփականության իրավունքից բացի, այլ գույքային իրավունքներ ունեցող անձանց իրավունքները ենթակա են առանձին հաշվառման:
15.4. Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Էփրիքոթ Կապիտալն անժամկետ օգտագործի Հաճախորդի հաշվում առկա Ակտիվներն ի շահ իրեն, այդ թվում գրավադրի դրանք, եթե այլ բան նախատեսված չէ Էփրիքոթ Կապիտալի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով/համաձայնագրով: Այդուհանդերձ Էփրիքոթ Կապիտալը պարտավորվում է Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում ապահովել այդ Ակտիվների հասանելիությունը Հաճախորդին: Արժեթղթերի օգտագործման պարագայում Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում Էփրիքոթ Կապիտալը պարտավորվում է հասանելի դարձնել իրենց տեսակով, անվանական արժեքով, նկարագրությամբ և քանակով նույնական արժեթղթեր:
15.5. Էփրիքոթ Կապիտալն իրավունք ունի անժամկետ գրավադրելու Հաճախորդի հաշվում առկա Ակտիվներն իր անունից, եթե այլ բան նախատեսված չէ Հաճախորդի հետ կնքված պայմանագրով/համաձայնագրով: Այդուհանդերձ Էփրիքոթ Կապիտալը պարտավորվում է Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում ապահովել այդ Ակտիվների հասանելիությունը Հաճախորդին:
15.6. Հաշվին առկա Ակտիվների դիմաց Էփրիքոթ Կապիտալը տոկոսներ չի վճարվում, եթե այլ բան նախատեսված չէ Սակագներով կամ Հաճախորդի հետ կնքված պայմանագրով/համաձայնագրով:
15.7. Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդի Ակտիվները կարող է պահել անվանատիրոջ կամ իր անունով այլ ֆինանսական հաստատություններում (այդ թվում՝ արտասահմանյան) բացված բանկային կամ Ակտիվների հաշվառման այլ հաշիվներում՝ ՀՀ կամ Գործարքի կնքման այլ վայրի օրենսդրության և դրան համապատասխան կնքված պայմանագրերի համաձայն, ինչի համար Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը:
15.8. Էփրիքոթ Կապիտալին իրավունք է վերապահվում Գործարքներ կնքելիս միացնել Հաճախորդի Ակտիվները իր այլ Հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներին՝ ամեն դեպքում, սակայն, պահպանելով իր և Հաճախորդի, ինչպես նաև իր տարբեր Հաճախորդների Ակտիվների առանձնացված հաշվառումը ներքին հաշվառման (արտացոլման) համակարգի պատշաճ վարման միջոցով:
15.9. Հաճախորդի՝ Ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվող և դրանց մատուցման կապակցությամբ կնքված Գործարքների արդյունքում ստացված Ակտիվները Էփրիքոթ Կապիտալը հաշվառում է Հաճախորդի Հաշվին (անհրաժեշտության դեպքում Հաշիվներ բացելով առանձին արժույթներով):

ԳԼՈՒԽ 16. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

16.1. Պայմանագրի և սույն Պայմանների շրջանակներում Էփրիքոթ Կապիտալը երաշխավորում է, որ՝
16.1.1. պատշաճ իրավունակությամբ օժտված անձ է և իրավասու է Հաճախորդի հետ կնքել Պայմանագիր,

16.1.2. Էփրիքոթ Կապիտալը ունի Ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ բոլոր լիցենզիաները և թույլտվությունները,
16.1.3. Էփրիքոթ Կապիտալի անունից Պայմանագիրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն և այդպիսով Էփրիքոթ Կապիտալի համար ստեղծել, փոփոխել և դադարեցնել Պայմանագրից բխող իրավունքներ ու պարտականություններ,
16.2. Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը հաստատում և հավաստիացնում է հետևյալը.
16.2.1.Հաճախորդն իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրության (անձնական օրենքի) համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել Պայմանագիրը, իր անունից ձեռք բերել իրավունքներ ու պարտականություններ,
16.2.2. Պայմանագիրը ստորագրող անձն իրավասու է ստորագրել/հաստատել այն Հաճախորդի անունից համաձայն կիրառելի օրենսդրության և Հաճախորդի կանոնադրության ու ներքին իրավական ակտերի (իրավաբանական անձի դեպքում), ինչպես նաև այդպիսի ստորագրությամբ/հաստատմամբ Հաճախորդի համար ստեղծել, փոփոխել ու դադարեցնել իրավաբանական ուժ ունեցող իրավունքներ և պարտականություններ,
16.2.3. Գործարք կնքելու համար Էփրիքոթ Կապիտալին տրամադրված Հաճախորդի Ակտիվները ծանրաբեռնված չեն երրորդ անձանց իրավունքներով, ստացվել են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդու թրաֆիքինգի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ, միաժամանակ համաձայնելով, որպեսզի Էփրիքոթ Կապիտալն իրականացնի բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք պահանջվում են ըստ ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրության և Էփրիքոթ Կապիտալի ներքին իրավական ակտերի, և միայն հաշվի բացումն արգելող հիմքերի բացակայության դեպքում բացի/ակտիվացնի Հաշիվ(ներ)ը,
16.2.4. մինչև Պայմանագրի կնքումը/հաստատումը նախապես ծանոթացել է Պայմանագրի, Պայմանների, Սակագների, Ռիսկերի հայտարարագրի, Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման ընթացակարգի, Տվյալների կառավարման քաղաքականության, Հաճախորդների պատվերների կատարման քաղաքականության բովանդակությանն ու պայմաններին և ընդունում է դրանք, ծանոթացել/ծանոթանալու է Էփրկիքոթ Կապիտալի կողմից մատուցվող ծառայություններին վերաբերող և Էփրիքոթ Կապիտալի պաշտոնական կայքում հրապարակված այլ իրավական ակտերին, ինչպես նաև Պայմանագրի շրջանակում կամ ի կատարումն Պայմանագրի իր կողմից ներկայացվող/ներկայացված բոլոր Պատվերների, Հանձնարարականների բովանդակությանը՝ այդ թվում արժեթղթերի ձեռքբերման/օտարման/տնօրինման մասով, իր կողմից ներկայացվող Պատվերներից, Հանձնարարականներից յուրաքանչյուրի մասով հաստատում է, որ տեղեկացված է և տիրապետում է Պատվերենրի, Հանձնարարականների ներկայացման և/կամ դրանցում նշված արժեթղթերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությանը, ներառյալ, սակայն չսահմափակվելով այդ

արժեթղթերի տեղեկատվական թերթիկին, ազդագրին, առաջարկի պայմաններին, սահմանափակումներին և պահանջներին, և համապատասխանում է Հանձնարարականների, Պատվերների ներկայացման /արժեթղթերի ձեռքբերման/օտարման և/կամ տնօրինման համար սահմանված ցանկացած և բոլոր պահանջներին:

Հաճախորդը գիտակցում է, որ Ռիսկերի Հայտարարագիրը չի նկարագրում արժեթղթերի շուկայում ներդրումների հետ կապված բոլոր ռիսկերը,

16.2.5. Էփրիքոթ Կապիտալին պատշաճ ձևով կտրամադրի հավաստի տեղեկատվություն այն մասով, որը Էփրիքոթ Կապիտալը համարում է անհրաժեշտ, թույլատրելի կամ նպատակահարմար և թույլ կտա բավարարել կիրառելի կարգավորումների պահանջներին, արձագանքել որևէ երրորդ անձի կամ վերահսկող մարմնի հարցումներին՝ կապված Հաճախորդի Պատվերների/Հանձնարարականների կամ Գործարքների, ինչպես նաև Ծառայությունների մատուցմանն առնչվող այլ հարցերի հետ: Հաճախորդը ժամանակ առ ժամանակ կթարմացնի Էփրիքոթ Կապիտալին տրամադրված տեղեկատվությունը և տվյալները: Եթե համապատասխան տեղեկատվությունը վերաբերում է երրորդ անձի (ներառյալ Հաճախորդի հաճախորդներին, որոնց համար Հաճախորդը մատուցում է ծառայություններ), ապա Հաճախորդը կստանա նաև երրորդ անձանց համաձայնությունը նման տեղեկատվության բացահայտման համար,

16.2.6. մինչ Էփրիքոթ Կապիտալում հաշիվ բացելու համար դիմելը և այն բացելը, մանրակրկիտ կդիտարկի՝ արդյոք որևէ կոնկրետ Ակտիվի մեջ ներդրումներ կատարելը համապատասխանում է իր անձնական հանգամանքներին, գիտելիքներին, փորձին և ֆինանսական ռեսուրսներին:

16.2.7. սույն Պայմանների 5.2 կետում նշված միջոցներով տրամադրված հաղորդագրությունները, այդ թվում՝ Պատվերենը, Հանձնարարականները, համարվում են պատշաճ՝ անկախ դրանց ստորագրված լինելուց:

16.3. Սույն պայմաններում նշված հավաստիացումները և երաշխիքները Հաճախորդը տալիս է նաև իր այն հաճախորդների անունից, որոնց պատկանող Ակտիվները պահվում են Հաճախորդի անունով Էփրիքոթ Կապիտալում բացված անվանատիրոջ հաշվում:

16.4.Սույն պայմաններում նշված հավաստիացումները և երաշխիքները համարվում են ուժի մեջ Էփրիքոթ Կապիթալի և Հաճախորդի միջև կնքված Պայմանագրի գործողության ողջ ընթացքում և վերահաստատվում են յուրաքանչյուր անգամ, երբ Հաճախորդը ներկայացնում է Պատվեր, կնքում է գործարք, ներկայացնում է որևէ հանձնարարություն Էփրիքոթ Կապիթալին կամ կատարում է սույն Պայմաններով նախատեսված որևէ պարտավորություն:

ԳԼՈՒԽ 17. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

17.1. Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում

Պայմանագրով և սույն Պայմաններով ստանձնած իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

17.2. Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդը պատասխանատվություն են կրում Պայմանների 16-րդ գլխում նշված իրենց երաշխիքների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս կողմին այդպիսի երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը: Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդն ազատվում են իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս կողմի՝ Պայմանների 16-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը: Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է հատուցել երրորդ կողմին պատճառված ցանկացած վնաս, եթե այդ վնասը առաջանալու պատճառներից է հանդիսացել Պայմանների 16-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելը:

17.3. Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ Գործարքների կնքման գործընթացում Էփրիքոթ Կապիտալի կողմից ներգրավված Գործակալների (ենթակոմիսիոներների) և կամ Հաճախորդի Ակտիվները հաշվառելու համար որպես պահառու ընտրված անձանց, Գործարքների հակառակ կողմի անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև վերջիններիս կողմից գործարքներով, այդ թվում՝ արժեթղթերի և/կամ դրամական միջոցների փոխանցման հանձնարարականներից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով (այդ թվում՝ սույն Պայմանների 17.8 կետում նշված մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների, սահմանափակումների պատճառով) Հաճախորդին պատճառված վնասի համար:

17.4. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում ՀՀ կամ արտասահմանյան այն բանկերի անվճարունակության կամ սնանկության հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար, որտեղ Ծառայությունների մատուցման նպատակով բացված հաշիվներում հաշվառվում են Հաճախորդի դրամական միջոցները:

Միևնույն ժամանակ Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Էփրիքոթ Կապիտալի վերահսկողությունից դուրս է և, հետևաբար, վերջինս պատասխանատվություն չի կրում ինչպես Հաճախորդի բանկային հաշվից դրամական միջոցները փոխանցվելուց հետո Հաճախորդի Հաշվին փաստացի հաշվառվելու, այնպես էլ Էփրիքոթ Կապիտալի կողմից դրամական միջոցները ելքագրելուց հետո Հաճախորդի բանկային հաշվին փաստացի փոխանցվելու համար պահանջված ժամանակահատվածի/օրերի քանակի համար:

17.5. Հաճախորդի Պատվերների/Հանձնարարականների համաձայն կատարված գործարքների մյուս կողմի կողմից այդ գործարքով իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ռիսկը կրում է Հաճախորդը, իսկ Էփրիքոթ Կապիտալը հավաստում է, որ լավագույն ջանք կգործադրի՝ պատշաճ կատարում պահանջելու համար, սակայն նշվածի վերաբերյալ սույնով ոչ մի երաշխիք չի տալիս և պարտավորություն չի ստանձնում: Սույնով Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդը

հավաստում են, որ հաշվի առնելով այն, որ Պատվերների/Հանձնարարականների կատարումը կարող է տեղի ունենալ կարգավորված շուկաներում՝ հիմնականում Գործակալների և հաջորդականորեն նրանց ենթագործակալների շղթայի միջոցով և այդպիսի Գործակալների և ենթագործակալների կողմից, որ Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդի Պատվերները/Հանձնարարականները միայն փոխանցում/հաղորդում է Գործակալներին ի կատարում, որոնք իրենց հերթին այն կարող են նույնպես ի կատարում փոխանցել իրեն ենթագործակալներին և Էփրիքոթ Կապիտալը նման պայմաններում հնարավորություն չունի շրջահայացություն ցուցաբերել այդպիսի ենթագործակալ անձանց ընտրության հարցում, Էփրիքոթ Կապիտալն ազատվում է Պատվերի հիման վրա կնքված գործարքներով կամ Հանձնարարականի հիման վրա իրականացվող գործառնություններով երրորդ անձանց կողմից իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից: Սույնով Հաճախորդն համաձայնվում է, որ Էփրիքոթ Կապիտալը համարվում է պատշաճ շրջահայացություն չցուցաբերած միայն այն դեպքում, երբ Պատվերները կատարող կամ հաղորդող Գործակալներին ընտրելու հնարավորություն ունենալով՝ ընտրել է այնպիսի անձ, որի սնանկության/անվճարունակության կամ դրա անխուսափելիության մասին տեղյակ է եղել՝ այդպիսի ընտրություն կատարելիս:

17.6. Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում ԱՀ-ների գործողությունների կամ անգործության արդյունքում, ինչպես նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց կողմից Հաճախորդի Ակտիվներով Վերջնահաշվարկի չկայացման կամ ոչ պատշաճ իրականացման համար՝ անկախ դրա պատճառներից, ինչպես նաև ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների (այդ թվում այն դեպքերում, երբ Հաճախորդին Ծառայությունները մատուցվում են Համակարգերի միջոցով և տեղի է ունենում Համակարգի ցանկացած տեխնիկական խափանում) կամ Համակարգում ներկայացվող տեղեկատվության, տվյալների սխալի, անճշտության արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ այդպիսի խափանումները և վնասը տեղի են ունեցել Էփրիքոթ Կապիտալի դիտավորությամբ տեղի ունեցած գործողությունների արդյունքում:

17.7. Համակարգը և բոլոր մնացած տվյալներն ու տեխնոլոգիաները տրամադրվում են Հաճախորդին «ԻՆՉՊԵՍ ԿԱ» և «ԻՆՉՊԵՍ ՀԱՍԱՆԵԼԻ Է» սկզբունքով:

ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼԸ ՉԻ ՏԱԼԻՍ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ, ԹԵ ԲԱՑԱՀԱՅՏ, ԹԵ ԵՆԹԱԴՐՅԱԼ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՑԱՆՑԵՐԻ, ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳՉԻ, ԿԱՊՈՒՂԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՈՐԵՎԷ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՏՎՅԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԴ ԹՎՈՒՄ, ԲԱՑՑ ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼՈՎ՝ ՈՐԵՎԷ ԵՐԱՇԽԻՔ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԽԱՓԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՃՇԳՐՏՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԺԱՄԱՆԱԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԲԱՎԱՐԱՐ ԼԻՆԵԼՈՒ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՉԽԱԽՏԵԼՈՒ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Էփրիքոթ Կապիտալը, իր աշխատակիցները կամ գործակալները պատասխանատվություն չեն կրում և որևէ պարտականություն չունեն Հաճախորդի, վերջինիս հետ փոխկապակցված անձանց կամ երրորդ կողմի առաջ՝ կապված Համակարգում կամ Համակարգի օգտագործման ընթացքում տեղի ունեցած որևէ անճշտության, սխալի, բացթողման, տվյալների կամ տեղեկատվության կորստի, ընդհատման կամ ուշացման հետևանքով Հաճախորդի կրած վնասների կամ բաց թողնված օգուտների համար՝ անկախ դրանց առաջացման պատճառից:
Հաճախորդն հասկանում և համաձայնում է, որ Համակարգն օգտագործում է ամբողջությամբ իր ռիսկով: Հաճախորդը նաև հասկանում և համաձայնում է, որ Էփրիքոթ Կապիտալը կարող է ցանկացած պահի, որևէ պատճառով՝ իր բացառիկ հայեցողությամբ, հետ կանչել/արգելափակել կամ սահմանափակել Հաճախորդի մուտքը Համակարգ կամ դրա օգտագործումը՝ անկախ նրանից՝ նախապես տեղեկացրել է Հաճախորդին թե ոչ:
17.8. Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են Էփրիքոթ Կապիտալի մոտ Պատվերները/Հանձնարարականները կատարելու կամ ի կատարում փոխանցելու փաստացի անհնարինության իրավիճակ առաջանալու դեպքում՝ ցանկացած (այդ թվում՝ Էփրիքոթ Կապիտալի բացառիկ, լիարժեք և ամբողջական վերահսկողության ներքո չգտնվող և երրորդ անձանց և արտաքին միջավայրի հետ կապված հանգամանքներով պայմանավորված) պատճառներով՝ այդ թվում, համացանցի խափանում, Կենտրոնական բանկի, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, OFAC, ԵՄ, ՄԹ (OFSI) և/կամ այլ մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների հետևանքով Պատվերների/Հանձնարարականների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման պատճառով Հաճախորդի կրած ցանկացած վնասի համար՝ անկախ հետևանքների վրա հասնելու ժամանակից:
17.9. Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի Պատվերի կամ Հանձնարարականի հիման վրա կատարված Գործարքի կամ Գործառնությունների մյուս կողմի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այդ թվում տվյալ Գործարքի չեղարկման արդյունքում (այդ թվում՝ սույն Պայմանների 17.8 կետում նշված մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների, սահմանափակումների պատճառով) Գործարքի մյուս կողմի կողմից Գործարքի կատարման համար փոխանցված Ակտիվները չվերադարձնելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, և այդ դեպքում Ակտիվների չվերադարձման ռիսկը կրում է Հաճախորդը:
17.10. Էփրիքոթ Կապիտալը ձեռնարկում է լավագույն ջանքեր իր կողմից երրորդ անձանց փոխանցված տեղեկատվությունը վերջիններիս կողմից պաշտպանության համար: Այնուամենայնիվ Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմաններով սահմանված կարգով Հաճախորդի վերաբերյալ երրորդ անձանց տրամադրված տեղեկատվությունը վերջիններիս կողմից այլ անձանց բացահայտման համար:
17.11. Ցանկացած դեպքում Էփրիքոթ Կապիտալի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է դիտավորություն կամ ակնհայտ

անփութություն ցուցաբերելու արդյունքում՝ Պատվերների խախտմամբ գործարքներ կնքելու և սույն Պայմաններով սահմանված համապատասխան իրավական հիմքերի բացակայության դեպքերում Պատվերը/Հանձնարարականը չկատարելու դեպքերով և Հաճախորդին պատճառված իրական վնասի չափով:

17.12. Հաճախորդը պարտավորվում է հատուցել Էփրիքոթ Կապիտալի կրած ցանկացած վնաս, որն արդյունք է հանդիսացել Պայմանագրի և սույն պայմանների համաձայն Էփրիքոթ Կապիտալի կողմից Հաճախորդին Ծառայությունների մատուցման շրջանակներում երրորդ անձանց կողմից Էփրիքոթ Կապիտալին ներկայացված պահանջների բավարարման: Հաճախորդն ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջների հիմք են հանդիսացել Էփրիքոթ Կապիտալի՝ Հաճախորդի գործողություններով, այդ թվում՝ Պատվերների կատարմամբ չպայմանավորված անիրավաչափ գործողությունները:

17.13. Այն դեպքում, երբ Հաճախորդը Պատվերներ/Հանձնարարականներ ներկայացնում է և/կամ գործարքները կնքում է իր հաճախորդների հաշվին, Հաճախորդը պարտավորվում է Էփրիքոթ Կապիտալին զերծ պահել այն բոլոր վնասներից, պարտավորություններից, գործողություններից, պահանջներից, վնասներից և ծախսերից, որոնք առաջացել են Հաճախորդի հաճախորդների կողմից ներկայացված պահանջներից:

17.14. Հաճախորդը լիարժեքորեն պատասխանատու է բոլոր Պատվերների, Հանձնարարականների, Գործարքների և պարտավորությունների համար՝ անկախ իր ներքին սահմանափակումներից, այդ թվում՝ բաժնետերերի կամ կառավարման այլ մարմինների կողմից էական կամ խոշոր գործարքների նախնական հաստատման անհրաժեշտությունից: Էփրիքոթ Կապիտալը որևէ պարտավորություն չունի ստուգելու նման ներքին պահանջների կատարման փաստը, և նման հաստատման բացակայությունը չի կարող ազդել որևէ Գործարքի վավերության վրա:

Հաճախորդը համաձայնվում է, որ ցանկացած Պատվեր կամ Հանձնարարական, ինչպես նաև ցանկացած համաձայնագիր կամ փաստաթուղթ, որը Հաճախորդի անունից տրվում է կամ ստորագրվում է Հաճախորդի լիազորված անձի կողմից՝ Հաճախորդի կողմից նման լիազորության հետ կանչումից հետո, Էփրիքոթ Կապիտալի կողմից համարվելու է վավեր և կատարման ենթակա՝ եթե Պատվերի կամ Հանձնարարականի կամ փաստաթղթերի ստացման պահին Էփրիքոթ Կապիտալը տեղեկացված չի եղել այդ լիազորության հետ կանչման մասին:

17.15. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Պայմանների իմաստով անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, Պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող

օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:
17.16. Պայմանագրի այն կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային կապի միջոցներով հայտնել մյուս կողմին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի նվազեցվեն Կողմերի կրած վնասները:
17.17. Պայմանների 17.16 կետում նշված պայմանի չկատարման դեպքում Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդը կորցնում են իրենց իրավունքը նման պայմանների վկայակոչման համար:
17.18. Անհաղթահարելի ուժի աղդեցության վերացումից հետո Էփրիքոթ Կապիտալը և Հաճախորդը շարունակում են Պայմանագրով/Պայմաններով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը:

ԳԼՈՒԽ 18 ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

18.1. Սույն պայմանները, կազմելով Պայմանագրի անբաժանելի մասը, Հաճախորդի համար ուժի մեջ են մտնում վերջինիս կողմից Պայմանների 4.3 կետում նշված կարգով Պայմանագրի կնքման պահից և գործում են մինչև Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով դրա գործողության դադարումը: Բոլոր դեպքերում, սակայն, Պայմանագիրը շարունակում է գործել ընդհուպ մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը՝ նշված պարտավորությունների/պարտականությունների մասով:
18.2. Պայմանագիրը կարող է միակողմանիորեն լուծվել Հաճախորդի նախաձեռնությամբ՝ Էփրիքոթ Կապիտալին այդ մասին առնվազն 10 (տասը) օր առաջ ծանուցելու պայմանով:
Սույն կետում նշված դեպքում Հաճախորդը պարտավոր է հատուցել Էփրիքոթ Կապիտալին Պայմանների 13.4 կետով նախատեսված ու մինչև Պայմանագրի լուծման պահն առաջացած ցանկացած և բոլոր ծախսերը, ինչպես նաև Պայմանագրի լուծման հետևանքով անհրաժեշտ դարձած գործողությունների հետ կապված բոլոր ծախսերը:
18.3. Պայմանագիրը կարող է միակողմանիորեն լուծվել Էփրիքոթ Կապիտալի նախաձեռնությամբ՝ Հաճախորդին այդ մասին առնվազն 10 (տասը) օր առաջ ծանուցելու պայմանով: Սույն կետում և Պայմանների 18.4 կետում նշված Ծանուցման պահից սկսած Բրոքերը կարող է չընդունել Հաճախորդի Հանձնարարականները կամ Պատվերները, որոնք ուղղված են նոր դիրքերի բացմանը:
18.4. Պայմանագիրը կարող է միակողմանիորեն լուծվել Էփրիքոթ Կապիտալի կողմից՝ այդ մասին առնվազն 10 (տասը) օր առաջ ծանուցելով Հաճախորդին՝ եթե վերջին 6 (վեց) ամսվա ընթացքում Հաճախորդի Հաշիվն ունեցել է զրոյական մնացորդ:

18.5. Պայմանագիրը կարող է միակողմանիորեն անմիջապես լուծվել Էփրիքոթ Կապիտալի կողմից այդ մասին ծանուցելով Հաճախորդին՝ հետևյալ դեպքերից որևէ մեկում.
ա) Էփրիքոթ Կապիտալն ունի հիմնավոր կասկած, որ Հաճախորդը տրամադրել է կեղծ տեղեկատվություն.
բ) Հաշիվը օգտագործվում է անօրինական նպատակներով.
գ) Էփրիքոթ Կապիտալը Հաճախորդի հետ հարաբերությունների պատճառով կրում է հնարավոր հեղինակության ռիսկեր, կամ
դ) առկա է դատարանի կամ իրավասու մարմնի որոշում, որը պարտադիր է Էփրիքոթ Կապիտալի համար՝ համապատասխան գործողությունների ձեռնարկելու համար,
ե) Հաճախորդը մահացել է կամ իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ ճանաչվել է անհայտ բացակայող,
զ) Էփրիքոթ Կապիտալին հայտի է դարձել, որ Հաճախորդի կողմից սույն Պայմանների համաձայն ներկայացված հավաստիացումները և երաշխիքները չեն համապատասխանում իրականությանը:
18.6.Պայմանագրի ցանկացած հիմքով լուծումը հիմք է Հաճախորդի Հաշիվը սույն Պայմաններով սահմանված կարգով փակելու՝ եթե Հաշիվն ունի զրոյական մնացորդ և Համակարգին տրված հասանելիությունը դադարեցնելու համար:
Եթե Հաճախորդի Հաշվին առկա են Ակտիվներ, ապա Հաճախորդը պարտավոր է Պայմանագրի լուծմումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ, իսկ Պայմանների 18.5 կետով սահմանված կարգով լուծելու դեպքում՝ Պայմանագիրը լուծելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Էփրիքոթ Կապիտալին ներկայացնել Պայմանների Հավելված 2-ով պահանջվող տեղեկատվությունը և /կամ Ակտիվների փոխանցման հանձնարարականը/գրությունը այդ Ակտիվները Հաճախորդի կողմից նշված հաշիվներին փոխանցելու վերաբերյալ և վճարել այդ հանձնարարականի կատարման համար՝ համաձայն Սակագների:
18.7. Եթե Պայմանների 18.3, 18.5 կամ 18.6 կետերով նախատեսված դեպքերում Պայմանագիրը լուծելիս Հաճախորդը Պայմանների 18.6 կետում նշված ժամկետում չի ներկայացնում հանձնարարական/գրություն՝ Ակտիվները այլ հաշիվների փոխանցելու վերաբերյալ, կամ ներկայացնում է ոչ ամբողջական/ոչ ճշգրիտ տեղեկատվություն, ապա Էփրիքոթ Կապիտալը կարող է յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ Հաճախորդի Հաշվին առկա Ակտիվների (արժեթղթերի դեպքում դրանց շուկայական արժեքի) 0.1%-ի չափով:
18.8 Այն դեպքում, երբ Հաճախորդի Հաշվին առկա են մինչև 4 (չորս) միլիոն ՀՀ դրամ արժողությամբ Ակտիվներ և Հաճախորդը չի ներկայացնում սույն Պայմանների 18.7 կետում նշված հանձնարարականը/գրությունը վերջինիս Ծանուցում ուղարկելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում կամ ներկայացնում է ոչ ամբողջական/ոչ ճշգրիտ տեղեկատվություն, ապա Էփրիքոթ Կապիտալը կարող է Հաճախորդից գանձել տուգանք Հաճախորդի Հաշվին առկա Ակտիվների (արժեթղթերի դեպքում դրանց շուկայական արժեքի) 50%-ի չափով: Այն դեպքում, երբ սույն կետում նշված տուգանքը կիրառելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում Հաճախորդը ևս չի ներկայացնում սույն կետում նշված հանձնարարականը/գրությունը կամ ներկայացնում է ոչ ամբողջական/ոչ

ճշգրիտ տեղեկատվություն, ապա Էփրիքոթ Կապիտալը կարող է Հաճախորդից գանձել տուգանք Հաճախորդի Հաշվին մնացած ակտիվների չափով:

ԳԼՈՒԽ 19. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19.1. Էփրիքոթ Կապիտալի և Հաճախորդի միջև Պայմանագրի և/կամ Պայմանների գործողության կապակցությամբ առաջացած վեճերը ենթակա են լուծման ՀՀ իրավասու դատարանների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պայմանագրի/ Պայմանների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
19.2.Սույն պայմաններով սահմանված կարգով Հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը, Հաճախորդից պահանջվող տեղեկությունները, Հաճախորդի կողմից ներկայացվող Պատվերները/Հանձնարարականները և Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները կարող են լինել հայերեն, իսկ հաճախորդի ցանկության դեպքում՝ այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն):
19.3. Սույն Պայմանների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Էփրիքոթ Կապիտալի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Էփրիքոթ Կապիտալի մոտ խորհուրդ չի ձևավորվել) և ուժի մեջ են մտնում ժողովի որոշմամբ սահմանված ժամկետում:
19.4. Սույն պայմանների բոլոր փոփոխությունները և լրացումները հանդիսանում են Պայմանների անբաժանելի մասը և կատարվում են Էփրիքոթ Կապիտալի կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Հաճախորդին ծանուցելու պայմանով: Հաճախորդի համար տվյալ փոփոխությունը/լրացումն ուժի մեջ է մտնում դրա մասին Հաճախորդին ծանուցելու օրվան հաջորդող 21-րդ օրը:
19.5. Եթե Հաճախորդը համաձայն չէ Պայմաններում կատարված փոփոխությունների և լրացումների հետ, ապա կարող է միակողմանիորեն լուծել Պայմանագիրը Պայմանների 18.2 կետով սահմանված կարգով:
19.6. Սույն Պայմանները փոխարինում են Հաճախորդի հետ կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագրում նշված Բրոքերային (Դիլերային) գործունեության կանոնակարգին և Պահառության կանոնակարգին և համարվում այդ կանոնակարգերի նոր՝ միասնական խմբագրություն: Հաճախորդի հետ մինչև սույն Պայմանների ուժի մեջ մտնելը կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագրում «Բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագիր», «Բրոքերային (Դիլերային) գործունեության կանոնակարգ», «Կանոնակարգ», «Կանոնակարգի 2-րդ գլխի 2.4. կետով նշված ծառայությունները» բառերը Պայմանների ուժի մեջ մտնելու պահից իրենց բոլոր հոլովաձևերով փոխարինվում են համապատասխանաբար «Բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր», «Բրոքերային (դիլերային) և պահառության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ», «Պայմաններ» և «Պայմանների 1-ին գլխի 1.1 կետով նշված ծառայությունները» բառերով:

19.7. Պայմանների 1.2 կետը, ինչպես նաև Պայմանների բոլոր այլ կետերը, որտեղ հղում է տրված «Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ»-ին, միայն այդ մասով ուժի մեջ են մտնում «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից Էփրիքոթ Կապիտալին կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման թույլտվություն տալու պահից:

Հավելված 1

Բրոքերային (դիլերային) և պահառության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների

Գործարքի իրականացման պատվեր N

Հաճախորդի Հաշվի համարը	
Պատվերի ստացման ժամանակը *(ժամ/րոպե/օր/ամիս/տարի)*	
Գործարքի տեսակը	☐ Առք ☐ Վաճառք
Պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ	☐ Արժեթղթերի բաժանորդագրություն ☐ Օպցիոնի իրականացում ☐ Նշել այլ բնույթ
Պատվերի տեսակը	☐ Շուկայական ☐ Լիմիտային ☐ Ստոպ ☐ Ստոպ լիմիտային
Լիմիտային գին (արժույթ)	
Ստոպ գին (արժույթ)	
Պատվերն ուժի մեջ է մինչև	☐ Առևտրային նստաշրջանի ավարտը (DAY) ☐ Կասեցումը (GTC) ☐ Նշված ամսաթիվը (GTD) ____
Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը)	
Բորսայական հապավում (սիմվոլ)	
Ակտիվի քանակը	

Ակտիվի անվանական արժեքը	
Առանձնահատուկ ցուցումներ (առկայության դեպքում)	
Պատվերը ստորագրող անձի՝ _____ (անուն, ազգանուն) _____ (Ստորագրություն) Կ.Տ.	Պատվերն ընդունեց՝ _____ (անուն, ազգանուն) _____ (Ստորագրություն)

Հավելված 2
Բրոքերային (դիլերային) և պահառության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների

ՀԱՃԱԽՈՐԴԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԱԳՐՈՒՄ
Ելքագրման հայտ N

Հաշվի համար		
Գումարի չափ		
Արժույթ		
Բանկային հաշվեհամար		
Հաշվետեր (անուն, ազգանուն /անվանում)		
Հաշվետիրոջ հասցե (ինչպես նշված է ստացող բանկում)		Լրացվում է միայն, եթե ստացող բանկի գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետությունը չէ:
Ստացող բանկի անվանում		
Ստացող բանկի SWIFT/BIC համար		
Ստացող բանկի հասցե		
Միջնորդ բանկի անվանում		
Միջնորդ բանկի SWIFT/BIC համար		
Միջնորդ բանկի հասցե		

Signed by/Ստորագրող անձի՝ _____

_____

Անուն Ազգանուն/Name Surname

Ստորագրություն/ Signature

օր/ամիս/տարի (dd/mm/yyyy)